Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Թատերգություն
13+

Շիրվանզադե
Եվգինե
դրամա 3 գործողությամբ

Նվիրվում է
դերասան ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԵԼՅԱՆԻՆ

Գործող անձիք

ՄԻՀՐԱՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, քաղաքում հայտնի փաստաբան, 35 տարեկան

ԵՎԳԻՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, նրա կինը, 24 տարեկան

ՀՌԻՓՍԻՄԵ ՄԻՐՎԵԼՅԱՆ, Եվգինեի մայրը, 50 տարեկան այրի:

ՄԱՐԹԱ ՏԵՐՏԵՐՅԱՆ, Միհրանի քույրը, 38 տարեկան այրի: Նախկին վարժուհի:

ՀԱՄԱԶԱՍՊ ՎԱՐՍԱՄՅԱՆ, Միհրանի մորեղբոր որդին և օգնականը, 28 տարեկան:

ԱԲԳԱՐ ՍՈՒԼԹԱՆՅԱՆ, ինժեներ-տեխնոլոգ, գործարանատեր: Միհրանի բարեկամն ու հասակակիցը:

ԱՐՇԱԿ ՍԱՐԱՖՅԱՆ, Եբգինեի մորեղբոր որդին: Նախկին սպա, այժմ անգործ, 36 տարեկան:

ԳԱՐԲՈ ԱԶԱՐՅԱՆ, 36 տարեկան:

ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ, 40 տարեկան:

ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ ԲԱՐՍԵՂ, 52 տարեկան:

ԵՐՄՈՆԵ, Ալավերդյանների աղախինը:

Գրագիր.

Գործողությունը կատարվում է նահանգական մեծ քաղաքում:

Արարված Ա.

Բեմը ներկայացնում է Ալավերդյանների բավական հարուստ զարդարված հյուրասենյակը: Դեպի ձախ երկու դուռ — խորքինը տանում է սեղանատուն, ավանսցենայի կողքինը — Եվգինեի ննջարանը: Այս երկու դռների միջև դրված է թախտ թանկագին մութաքաներով ու բարձերով: Խորքում նույնպես երկու դուռ, որոնցից ձախինը տանում է դեպի ննջասենյակ, աջինը՝ դեպի Միհրանի առանձնասենյակ: Աջ պատի վրա լուսամուտներ դեպի փողոց: Աջ պատի տակ դրված է դաշնամուր, մոտը մի սեղան, վրեն գեղարվեստական իրեր, լուսանկարներ դիտակով հանդերձ: Սեղանի մոտ բարձր պատվանդանով բրոնզյա լամպար ահագին մետաքսյա լուսամփոփով: Խորքի երկու դռների միջին ուղղությամբ բեմի մեջտեղում դրված է գահավորակ, շրջապատված շքեղ բազկաթոռներով: Աջ կողմում մի օրորվող բազկաթոռ (качалка): Ամենուրեք սենյակի ազատ և հարմար անկյուններում փոքրիկ, ցածր փափուկ նստարաններ: Պատերին կախված են յուղանկարներ և գրավյուրներ: Առհասարակ ամբողջ կահ-կարասին կրում է նոր ձեռք բերված հարստության դրոշմ: Ամեն ինչ նոր է ու ժամանակակից: Երեկոյան 8 ժամն է: Սենյակը լուսավորվում է գահավորակի առջև սեղանի վրա դրած և դաշնամուրի մոտ գտնվող բրոնզյա լամպարներով:

Տեսիլ 1

ՏԻԿ. ՄԱՐԹԱ և ԵՐՄՈՆԵ

Վարագույրը բարձրանալիս Երմոնեն անձեռոցիկով մաքրում է բազկաթոռները, իսկ Տիկին Մարթան բրոնզյա լամպարի մոտ նստած կարդում է ինչ — ոչ գիրք.

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Շուտ արա, գործդ վերջացրու, ութ ժամից անց է, սամովարը կուշանա:

ԵՐՄՈՆԵ. Իսկի էլ չի ուշանա:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Էլի հակառակեցի՞ր, ախար հայ ես է:

ԵՐՄՈՆԵ. Հայն ի՞նչ է որ…

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Հայը գոռոզ է, կոպիտ է, հակաճառող:

ԵՐՄՈՆԵ. Իսկի էլ հակաճառող չէ:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. (Ժպտալով) Դե լավ, գնա սամովարի հոգս տես, թե չէ կբարկանամ:

ԵՐՄՈՆԵ. Իսկի էլ չես բարկանա, գնում եմ: (Գնում է ձախ կողմի խորքի դռներով սեղանատուն: Ձախ թևի ավանսցենայի կողմի դռներից, ննջարանից դուրս է գալիս Եվգինեն):

ՏԵՍԻԼ 2

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Երեխան քնե՞ց:

ԵՎԳԻՆԵ. Վերջապես քնեց (Նստում է դաշնամուրի մոտ երեսը դեպի Մարթան: Լռություն): Տեր աստված, ինչքան տխուր է առանց Միհրանի:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. (Գիրքը ծալելով և ծնկան վրա դնելով) Մի կես ժամ ուշացավ, էլի տխրեցի՞ր: Ախ, սիրահարներ, սիրահարներ, շուտով ձեր ամուսնության տասնևչորս ամիսը կլրանա, էլի կարծես, երեկ եք պսակվել: Այդպես չի կարելի, մի քիչ պակասեցրեք ձեր կրակը: (ժպտում է):

ԵՎԳԻՆԵ. Միթե ուրա՞խ չես, որ եղբայրդ սիրվում է:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Ընդհակառակը: Քեզ լավ հայտնի է, թե որքան թանկ է ինձ համար Միհրանի բախտավորությունը: Սիրիր նրան, Եվգինե, նա հազվագյուտ մարդ է:

ԵՎԳԻՆԵ. Այժմ ես նրան ճանաչում եմ ավելի, քան դու:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Ա՛յո: կնշանակե գիտես, եթե նրան վշտացնես — կդժբախտանա:

ԵՎԳԻՆԵ. (հառաչելով) Ինչո՞ւ պիտի վշտանամ, քանի որ սիրում եմ:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Իսկ նա քեզ ուղղակի պաշտում է: Նա չի էլ կարող ուրիշ կերպ սիրել: Նրա բնավորությունն անխառն է, հաստատ և, այսպես ասած, ամբողջ: Այդ տեսակ մարդիկ, երբ սիրում են, սիրում են անկեղծ, խորը և անվերջ սիրով: Բայց շողոքորթություն չհամարես, դու էլ նրա նման ես: Դուք երկուքդ, իմ կարծիքով, միևնույն բնավորության տեր եք: Զարմանալի է, որ ասում են, թե միայն կոնտրաստներն են միմյանց սիրում:

ԵՎԳԻՆԵ. Չգիտե՞մ, կա իմ մեջ նրա արժանավորություններից որևէ մեկը, թե չէ, գիտեմ, որ ոչ միան սիրում եմ նրան, այլև հարգում: Նա այն մարդն է, որին վաղուց ստեղծել էր երևակայությունս և որին ես ուշ ճանաչեցի: Հարգում եմ նրա սրտի պարզությունը, խելքի կորովը, կամքի ուժը: Այո, նա զորեղ կամքի տեր է: Միմիայն յուր խելքին է պարտական այն դիրքը, որ նա ունի մեր քաղաքի հարյուրավոր փաստաբանների մեջ: (Վեր է կենում ու շրջում):

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Արի այդ խոսքերիդ համար քեզ համբուրեմ: (Վեր է կենում ու համբուրում): Այդ կարծիքը պատիվ է բերում քեզ, Եվգինե: Նշանակում է, որ դու երախտագետ ես, իսկ երախտագիտությունը մեր ժամանակներում մեծ արժանիք է: Եվ ինչպե՞ս չլինել երախտագետ: Հակառակ ընդհանուր ախտի, նա չհափշտակվեց ոչ օժիտով, և ոչ կապերով և շատ հարսնացուների մեջ քեզ ընտրեց. քեզ, որ համարյա ոչինչ չունեիր, բացի անձնական արժանապատվությունից: (Լսում է և նայելով Եվգինեին ժպտում): Միայն իմացիր , եթե մի օր դու նրան վշտացնես, կատեմ քեզ: Իսկ դու գիտես, թե որքան եմ ատում, երբ ատում եմ:

ԵՎԳԻՆԵ. (Նայում է աչքերին, աշխատելով ժպտալ): Գիտեմ... աչքերդ արտահայտում են: (Երմոնեն ներս է մտնում լրագրերը ձեռքին):

ԵՐՄՈՆԵ. (Տալով լրագրերը Տիկ. Մարթային) Խանջալովների աղախինը բերեց:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Այո, այո, ես էի խնդրել: (Կանգնելով լամպարի մոտ, շտապով բաց է անում համարներից մեկը ու նայում): Այն է որ կա:

ԵՎԳԻՆԵ. Այդ ի՞նչ է:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Արաբաջյանի ինքնասպանության գործի հաշիվը: (Եվգինեն ցնցվում է):

ԵՐՄՈՆԵ. Խնդրել է, որ էգուց առավոտ հետ ուղարկեք:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Ասա լավ: Ուրեմն այս երեկո պիտի կարդալ: Բայց ոչ հիմա, շաբաթ երեկո է, երևի հյուրեր կգան:

ԵՎԳԻՆԵ. Այդտեղ ամբո՞ղջ գործն է տպված:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Չգիտեմ, ինձ հետաքրքրում է մամուլի կարծիքը:

ԵՎԳԻՆԵ. (Խլելով լրագրերը) Տուր ինձ, ես ուզում եմ կարդալ:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. (Զարմացած) Ինչո՞ւ այդպես խլեցիր: Ուզում ես — միասին կարդանք:

ԵՎԳԻՆԵ. Ոչ, ոչ, առանձին-առանձին …(Ուզում է գնալ):

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Ո՞ւր ես գնում:

ԵՎԳԻՆԵ. Իմ ննջարանը՝ կարդալու:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Ինչո՞ւ ես այդպես շտապում:

ԵՎԳԻՆԵ. (Շփոթվելով) Ոչինչ, հենց այնպես: (Զանգակի ձայն): Ահ, հյուր է գալիս: Դու զբաղեցրու, ես իսկույն...(Գնում է նույն դռներով, որտեղից եկել էր):

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. (Նայում է նրա հետևից զարմացած):

ՏԵՍԻԼ 3

ՏԻԿ. ՄԱՐԹԱ և ՍԱՌԱՓՅԱՆ

ՍԱՌԱՓՅԱՆ. (Ներս մտնում ֆրակով: Նա մի փոքր հարբած էր, բայց իրան պահում էր խիստ կանոնավոր): Քույր Մարթա, ամենախորի՜ն հարգանքներս…

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Հըմ, էլի քեփդ լավ եմ տեսնում: Այդ ո՞րտեղից:

ՍԱՌԱՓՅԱՆ. Բուրժուական ճաշից եմ գալիս: (Ընկղմելով օրորվող բազկաթոռի վրա): Ներեցեք, քույր Մարթա, այս բազկաթոռը նպաստում է մարսողության: Միրզաջանովների տանն էի, իրանց փեսացվի ծնողներին ճաշ էին տալիս: Է՜է, քույր Մարթա, մեր հասարակությունը լուսավորվել է: Այժմ պահանջում են, որ ֆրակով գնանք ճաշի: Տասնուհինգ տարվա մեջ Միրզաջանովների տրեխները փոխվել են փայլուն կոշիկների, փափախը — ցիլինդրի, չուխան — ֆրակի:

(Հանելով ժիլետի գրպանից մի սիգար): Կարելի՞ է: (Մարթան գլխով նշան է անում , նստելով բազկաթոռներից մեկի վրա): Մերսի՜: Այո, այո մեծ հառաջադիմության մեջ է մեր ազգը: Պարոն Միրզաջանովը դեռ չի սովորել կերակուրը պատառաքաղով ուտել, լակեյին պարդոն է ասում . տիկին Միրզաջանովն ասում է. աղջիկս կադը — պատր է սովորում, տղաս վալանչել է ածում: Հայերեն արժանի չի համարում խոսելու: Մի խոսքով շիլա — փլավ:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Ճաշը երկա՞ր տևեց:

ՍԱՌԱՓՅԱՆ. Այո: Հետո երիտասարդները նստեցին բակարա խաղալու, ես մի փոքր մտիկ արի, սիրտս պղտորվեր, փող չունեի, որ բախտս փորձեմ: Քույր Մարթա, տխուր է, շատ տխուր:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Ամուսնացեք…

ՍԱՌԱՓՅԱՆ. (Շուռ տալով ժիլետի դատարկ գրպանները): Սրանցո՞վ: Մինչև անգամ ժամացույց էլ չունիմ, գրավ եմ դրել հյուրանոցի տիրոջ մոտ:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Ինչո՞ւ չեք ծառայում:

ՍԱՌԱՓՅԱՆ. Ով է պաշտոն տալիս, որ ծառայեմ: Ինձ հրավիրում են ճաշերի, ընթրիքների, երեկույթների, հյուրասիրում են Ռեդերերի շամպանիայով, Հանրի Կլեյնի կամ Ումպարի սիգարներով, իսկ պաշտոն չեն տալիս:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Երևի, անընդունակ են համարում:

ՍԱՌԱՓՅԱՆ. Անընդունա՞կ: Ես մի ամբողջ ռոտա եմ կառավարել, մի քոսոտ Բաղդասարի կամ Մաթևոսի կոնտորա չե՞մ կարող: (Շրջում է): Ոչ այդ չէ, քույր Մարթա, ընդունակ եմ, բայց լռել չգիտեմ: Օ՜օ, լռելու արհեստը շողոքորթելու արհեստից լ շահավետ է: Ես ճանաչում եմ մարդիկ, որոնք համարվում են խելոք, որովհետև գիտեն լռել և խորհրդավոր կերպով իրանց քիթը քորել: Քիթն քորելն երևի տաղանդ է: (Մարթան ծիծաղում է): Բայց դուք ծիծաղում եք, (զանգի ձայն)ձեզ հետ լուրջ խոսել չի կարելի: Ահա, հյուրեր: Գրազ կգամ, որ Գալամքարյաններն են: Ով լինի-չլինի, նրանք ամեն շաբաթ երեկո այստեղ են: (Ներս են մտնում տիկին և պարոն Գալամքարյանները: Կինը հագնված է շքեղ, մարդը հնամաշ սյուրտուկով է): Տեսաք Ռոմեոն և Ջուլիետտա:

ՆՐԱՆՔ և ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆՆԵՐ, հետո ԵՎԳԻՆԵ.

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Բարևելով, իսկ Մարթայի հետ համբուրվելով) Ա՜խ, Մարթա, եթե իմանաս ինչքան հոգնած եմ, կցավես: (Նստում է): Այսօր երեք նիստ եմ ունեցել, չորրորդն էլ բաց եմ թողել: Ամբողջ քաղաքն էլ չափչփել եմ: Անիծվի՜ այսպես քաղաքը, մի հատ բնակարան չեմ գտնում խեղճ տաճկահայ որբերի համար:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Էլի որբեր:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Այո, այո, էլ մի՜ ասա:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (նստում է սյուրտուկի փեշերը զգուշությամբ հետ քաշելով): Լո՜ւ էլ եկել են մեր գլխին թափվել: (ժպտում է):

ՍԱՌԱՓՅԱՆ. Լո՜ւ, (Մարթան հանդիմանաբար նայում է Սառափյանին):

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Ըմբո, փռակդ նոր ըմ տեսնում, Էդ հինչ տեղ... (ժպտում է):

ՍԱՌԱՓՅԱՆ. (Սիգարի ծուխը հրճվանքով արձակելով գլխից վեր) Տենցևայլնի վեչեր ըմ քինիլական... (Մարթան, հազիվ ծիծաղը զսպելով, դարձյալ հանդիմանաբար նայում է նրան):

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Բայց ո՞րտեղ է տիկին Եվգինեն:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Մի քիչ զբաղված է:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Երևի տնտեսությամբ: Ախ, երանի նրան: Հավատացնում եմ, ճաշելու ժամանակ չունիմ այդ տաճկահայերի ձեռքից:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Էլ, տալուց նըղացանք, աղպեր, օզըմըն հա՜ օզըմ...

ՍԱՌԱՓՅԱՆ. Շատ ըն օզում: (Մարթան դարձյալ հանդիմանաբար նայում է նրան):

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Չկարծես, Մարթա, որ այսօր հյուր եմ եկել: Ձերոնց հետ գործ ունիմ: Ախ, գլուխս տրաքում է, չգիտեմ որն անեմ կամ որի մասին մտածեմ:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Ձորն ասեմ, զորը խոտովանեմ (Ծիծաղում է հազալով):

ՍԱՌԱՓՅԱՆ. Շատ դժվար է գործիչ կանանց դրությունը:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Ասում ըմ, ձեռ եկալ ասկի գործերից, օղլուշաղովդ պերապիր. օ՛զըմ չի… (Ժպտում է):

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Բարսեղ, մարդ մենակ իր համար չպիտի ապրի: Այսօրվա օրն ամբողջ քաղաքում ես եմ մենակ մնացել ու մեկ էլ տիկին Պամպադուրյանը, մյուսները հեռացել են ասպարեզից: Այժմ բոլոր հույսերս տիկին Եվգինեի վրա է: Մենք վճռել ենք նրան էլ լծի տակ քաշել: Երիտասարդ, խելոք, զարգացած. նա շատ օգտակար կլինի հասարակության համար: Ննջարանի դռներից դուրս է գալիս Եվգինեն գունատ և հուզված): Ահա՛ և ինքը: (Համբուրվում է Եվգինեի հետ): Ես որ չգամ ձեր տուն, դուք իսկի չեք էլ հարցնիլ մեռած եմ, թե՛ կենդանի:

ՍԱՌԱՓՅԱՆ. (Առանձին): Այդ մեկը Հուդայի համբույր էր:

ԵՎԳԻՆԵ. (Բարևելով մյուս հյուրերին) Ներեցեք, այս քանի օրերս տկար էի, թե չէ — վաղուց էի պատրաստվում ձեզ այցելելու:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Տկար եք, Դուք այժմ էլ, կարծես, առողջ չեք. դուք գունատ եք, մինչև անգամ դողում եք:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Տիկինը ճիշտ է ասում, Եվգինե, դու գունատ ես: Ի՞նչ պատահեց:

ԵՎԳԻՆԵ. (Տիկ. Գալամքարյանի խորհրդավոր շփոթված) Ե՞ս... ճշմարիտ... ոչինչ. (Աշխատում է ժպտալ): Գլուխս մի քիչ պտտում է, սիրտս բաբախում:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Արյան սակավությունից կլինի, այո, դրանից կարող է մարդու գլուխը պտտել: (Նայում է իր ամուսնուն խորհրդավոր):

ԵՎԳԻՆԵ. Ոչինչ, անցավ, նստեցեք խնդրեմ: (Նստում են): Էհ, ասացեք, տիկին, ինչ նորություն, ինչով եք զբաղված.

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Միթե տիկին Գալամքարյանին հարցնել կարելի է, թե ինչով է զբաղված: Հենց հիմա այդ մասին էի գանգատվում: Ձեզ մոտ էլ գործով եմ եկել:

ԵՎԳԻՆԵ. Հրամայեցեք:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Մի նոր ընկերություն ենք կազմել, դուք էլ պիտի անդամ գրվեք:

ՍԱՌԱՓՅԱՆ. Ընկերություն՝ ընկերական ոգին սպանելու համար — ահա բոլոր հայ ընկերությունների նպատակը:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Դուք ամեն լուրջ բան կատակ եք դարձնում, պարոն ՍԱՌԱՓՅԱՆ:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Կիրափառ ըս խոսըմ, Սռափով:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Եվգինեին) Իսկապես, ես սխալ ասացի, ընկերություն չէ, այլ շատ մոտիկ ծանոթներից մի փոքրիկ շրջան:

ԵՎԳԻՆԵ. Նպատակը:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Աղքատ հարսնացուներին օժիտ տալ:

ՍԱՌԱՓՅԱՆ. Պարոն Բարսեղ, շնորհավորում եմ:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Խիհ՞...

ՍԱՌԱՓՅԱՆ. Նոր ընկերությունը ձեր մագազինի փտած ապրանքները կնաղդացնի: (Մարթան թաքուն ծիծաղում է):

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Ըմբո, ես հիբի եմ փտած ապրանք ծախալ…

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Եվգինեին) Հուսով եմ, որ չեք մերժիլ: Անդամավճարը միանվագ երկու հարյուր ռուբլի:

ԵՎԳԻՆԵ. Չգիտեմ: Ամուսնուցս կհարցնեմ, հետո պատասխան կտամ:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ, Ձեր ամուսնոց: Այդ ի՞նչ ասել է — խոնարհություն, սեր, թե երկյուղ:

ԵՎԳԻՆԵ. Ոչ մեկը, կամ գուցե երեքն էլ միասին:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Կեցցե՛ս, Եվգինե:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Լսում ես, Զարուհի, խոնարհութուն, սեր, երկյուղ, իրեքն էլ միասին, լյավ պեն ա հա՛ ա:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Խոնարհությունն ու երկյուղը դեն գցեք, տիկին, սերը պահեցեք, որովհետև մենք քսաներորդ դարի սկզբումն ենք ապրում:

ՍԱՌԱՓՅԱՆ. Բրա՛վո, ազգը մեծ առաջադիմության մեջ է... (Տիկ. Գալամքարյանը Սառափյանի վրա ատելության հայացք է ձգում):

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Ով սիրում է, նա պետք է խոնարհվի և վախենա: Խոնարհվի սիրելուց, վախենա՝ սիրուց զրկվելուց:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Մի քիչ խրթին էր, ամա քեփս կկավ (Կնոջը): Դու էլ վըեր մի քիչ խոնարհվիս, փիս չինի, հաա: (Ծիծաղում ու հազում է):

ԵՎԳԻՆԵ. Ո՞րտեղ կկամենայիք թեյ խմել, այստե՞ղ, թե սեղանատանը: (Ուզում է գնալ):

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Իհարկե այստեղ: Սեղանատանը շատ տոթ է: Բայց դու մի գնար, ես ինքս կկարգադրեմ: (Գնում է սեղանատուն, ձեռով նշան անելով Եվգինեին՝ նստել: Նույն վայրկյանին ներս են մտնում նախասենյակի դռնից Միհրանը, Սուլթանյանը և Վարսամյանը):

ՏԵՍԻԼ 5.

ՆՐԱՆՔ, ՄԻՀՐԱՆ, ՍՈՒԼԹԱՆՅԱՆ և ՎԱՐՍԱՄՅԱՆ

ՄԻՀՐԱՆ. (Բարևելով ուրախ ու զվարթ) Հյուրե՛ր, ավելի թանկագին սյուրպրիզ չէր կարող լինել ինձ համար: (Սառափյանին): Սա, ֆրակով, հասկացա, Միրզաջանովների ճաշին ես եղել: (Գալամքարյաններին) Հուսով եմ, այս երեկոն լավ կանցկացնենք: Հազիվ կարողացա այս անպիտանին (ցույց տալով Սուլթանյանին) բերել այստեղ:

ԵՎԳԻՆԵ. Սուլթանյանին: Մի՞թե այդքան ձանձրանում եք մեր տանը, որ ուժով են բերում ձեզ:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Օ՜, ոչ տիկին: Ես միշտ հոգեպես հանգստանում եմ ձեր ընկերության մեջ: Եթե զբաղված չլինեի, ես ինքս կձանձրացնի ձեզ իմ այցելություններով: (Հյուրերը նստում են: Վարսամյանը բռնում է մի համեստ անկյուն):

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Հեգնաբար) Արդյոք, ինչո՞վ է զբաղված մեր ինժեներ-տեխնոլոգը:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. (Ձեռ տալով) Նյութականով, տիկին, նյութականով:

ՄԻՀՐԱՆ. Եվգինե, մեզ թեյ տալու՞ են, թե չէ:

ԵՎԳԻՆԵ. Ախ, Մարթան ամեն բան ուշացնում է: (Մոտենում է սեղանատան դռներին, նայում ներս, հետ դառնում) Իսկույն:

ՄԻՀՐԱՆ. (Վարսամյանին) Համազասպ, ինչ ես այդ անկյունում թաքնվել. մոտեցիր, տիկիններին զբաղեցնելու, իսկ ես գնում եմ աղջկաս տեսնելու: Ամբողջ օրը չեմ տեսել նրան: (Գնում է):

ԵՎԳԻՆԵ. Քնած է, զգույշ որ չզարթնեցնես:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Եվգինեին) Ի՞նչ քնքուշ հայրիկ է: (Դառնալով տղամարդկանց): Պարոններ, ինչո՞ւ օրինակ չեք վերցնում պարոն Միհրանից: Տեսնո՞ւմ եք ամուսնական կյանքի քաղցրությունը: (Երմոնեն թեյ է բերում և բաժանում):

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Ամուսնությունը, տիկին, վիճակախաղ է: Եթե Միհրանի տոմսակը տարել է ամենախոշոր գումարը, այդ չի նշանակում, որ մեր տոմսակները փուչ չեն դուրս գալ:

ՏԻԿ.ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Ինչպես Արաբաջյանի՞նը, ախ ի դեպս, կարդացել եք Թիֆլիսի լրագրներում այդ պատմությունը: (Նայում է Եվգինեին):

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Ինչպես չէ, ուր գնում եմ, այդ մասին եմ լսում: Դա մի սարսափելի դրամա է:

ՍԱՌԱՓՅԱՆ. (Որ դիտե տիկին Գալամքարյանի հետին միտքը): Այո, դա եղեռնագործություն է և անմիտ եղեռնագործություն:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Հունցոր կարուհին ա ասըմ, թամամ բիաբուռչիթոն ա:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Մի գործ, որ ամոթ է բերում մեր ինտելիգենցիային:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. (Որ զբաղված է գեղարվեստական իրերով ծածկված սեղանի մոտ, լուսանկարները դիտակով նայելով) Ինտելիգենցիան, արդյոք, ի՞նչ դեր է կատարում այդտեղ:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Պարոն Արաբաջյանը համարվում է իր կնոջ ինքնասպանության պատճառը, իսկ նա համալսարանական է:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Եվ ի՞նչ: Մի՞թե մի մարդու մեղքը պիտի ամբողջ դասակարգի վզին փաթաթել:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Իմ կարծիքով, այդ Արաբաջյանն այնքան էլ արժանի չէ այն հալածանքին, որին ենթարկել է նրան հասարակական կարծիքը:

ՄԻՀՐԱՆ. (Ներս է մտնում) Քնած է, հարբածի պես: (Նստում է Եվգինեի մոտ և սկսում ականջ դնել խոսակցությանը):

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Դուք արդեն չափազանց ներողամիտ եք դեպի Արաբաջյանը: Երևի գործին լավ ծանոթ չեք: (Ներս է մտնում Մարթան մի բաժակ թեյ ձեռին խառնելով):

ՍԱՌԱՓՅԱՆ. Ես էլ լավ ծանոթ չեմ այդ գործին:

ՄԻՀՐԱՆ. Այդ ի՞նչ է, Բաթումի դրամայի մասի՞ն եք խոսում: Օհ, ես շատ լավ գիտեմ: Թիֆլիս եղած ժամանակս մի օր մտա պալատը և կարդացի ամբողջ գործը: (Եվգինեին): Ես քեզ դեռ չե՞մ պատմել:

ԵՎԳԻՆԵ. Ոչ. բայց մի քանի րոպե առաջ կարդացի լրագրում:

ՄԻՀՐԱՆ. Օo, ոչ, ես ավելի մանրամասն գիտեմ: Դա մի նշանավոր երևույթ է:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Հապա, հապա, պատմեցեք, շատ հետաքրքրական է:

ՄԻՀՐԱՆ. Ես կպատմեմ միայն էականը: Այդ Առաքել Արաբաջյանը համառ կերպով, նախադրյալ միտումով և սիստեմատիկաբար հալածել է իր կնոջը: Հալածել է գիշեր -ցերեկ, անդադար, որպեսզի հուսահատեցնի նրան: Նա զրկել է կնոջն ամեն հաճույքից, երբեմն չի թույլ տվել ուտել անգամ, հետը խոսել է՝ միշտ կոպիտ, շատ անգամ հայհոյանքներով: Ամեն քայլում հիշեցրել է նրան իր անցյալի տխուր սխալը և խայթել, խայթել է կարիճի պես: Եվ այս բոլորն այն օրից, երբ կինն անկեղծ, ազնվաբար, կարող եմ ասել նույնիսկ հերոսաբար, խոստովանել է իր անցյալի սխալը: Նա ներում է խնդրել մարդուց արտասուքն աչքերին, ոտներին ընկած: Մի մոռացեք, որ այդ սխալն անբախտ կինը գործել է գրեթե մանուկ հասակում: Մարդու սիրտը չի մեղմացե նա չի ներել: Նա, ընդհակառակը, պահանջել է թշվառից անձնասպանություն գործել: Նա թույն է բերել տուն, դիտմամբ թողել է կնոջ ննջարանում, սեղանի վրա: Նա ուզեցել է ազատվել կնոջից իր պատիվն իբրև մաքրելու համար: Եվ մաքրել է. տիկին Արաբաջյանը թունավորվել է, թունավորելով արգանդում և՛ մի անմեղ էակի: Ահա մռայլ եղելությունը: Հետաքրքրական է կնոջ տանջանքը, բայց այդ մի սարսափելի տրագեդիա է, որ ես չեմ նկարագրիլ, խնայելով ձեր ներվերը:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Նայելով Եվգինեին) Կարելի է երևակայել:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Եվ մի՞թե այդ մարդը, որին դու գրեթե հրեշացրիր, ինքը չի՞ տանջվել:

ԵՎԳԻՆԵ. (Որ այս խոսակցության ամբողջ միջոցին, մի անկյունում, սակայն հասարակությանը նկատելի տեղ նստած, խորին ուշադրությամբ լսում է, երբեմն ցիցվելով): Տանջվե՞լ է:

ՄԻՀՐԱՆ. Այո, տանջվել է և այժմ էլ տանջվում է: Նրա Հոգեկան դրությունն էլ մի տրագեդիա է, բայց ի՞նչ է այդ տրագեդիան գործված հանցանքի համեմատ:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Եվ ի՞նչը պիտի տանջե նրան իսկապես: Ցանկալի է իմանալ:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Խղճի խայթոցը:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Խղճի խա՛յթոց …. (Հեգնաբար): Էհ, պարոններ, ում չի հայտնի, թե ինչ է խիղճ ասված բանը ոմանց համար: Նեղն ընկած ժամանակ ամենազգայուն մարդն անգամ իր խղճի առջև դուրս է բերում այնպիսի ճարպիկ կոմպրոմիսներ, որոնք կամաց -կամաց հանգստացնում են նրան ու թմրեցնում:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Շարունակելով նայել Եվգինեին) Այո, ճիշտ է, բայց հասարակական կարծիքը:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Լոխ էլ թքում ըն անաստվածի իրեսին:

ՍԱՌԱՓՅԱՆ. Լո՛խ: Ոչ, պարոն Բարսեղ, հասարակական կարծիքն օպերետային դատավոր է. ավազակին դատելով, նույն ավազակի հետ կանկան է պարում: (Բոլորը ծիծաղում են, բացի Եվգինեից):

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Հազալով և ծիծաղելով) Գյափդ ինի, Սռափով:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Մենք գիտենք միայն վրդովվել, իսկ պատժել-երբեք: Կանցնի մեկ, շատ -շատ երկու տարի, ամեն ինչ կմոռացվի, և դուք, ես, բոլորս նորից կսկսենք սեղմել նույն Առաքել Արաբաջյանի ձեռքը, նորից հարգանք ցույց տալ նրան:

ՍԱՌԱՓՅԱՆ. Այդ Արաբաջյանը հիմար է, Եթե ես լինեի նրա տեղը, կստիպեի այն անպիտանին կնոջս հետ ամուսնանալ, ինքս էլ խաչեղբայր կլինեի: (Բոլորը ծիծաղում են, բացի Եվգինեից):

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Ծիծաղելով ու հազալով) Վըեյ, մըեռա, Սռափռվ, մըեռա....

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Իսկ դուք, պ. Սուլթանյան, ի՞նչ կանեիք:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Ես կարձակեի կնոջս, ապահովելով նրան նյութապես: (Երմոնեն գալիս է և բաժակները հավաքում):

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Ո՞վ է էլի թեյ ցանկանում, (Բոլորը լուռ հրաժարվում են):

ՏԻԿ.ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Իսկ դուք ինչ կանեիք, պարոն Ալվերդյան, եթե այդ Արաբաջյանի տեղը լինեիք (Եվգինեն ցնցվելով ուշադրությունը լարում է):

ՍԱՌԱՓՅԱՆ. (Առանձին) Օ՛ձ…

ՄԻՀՐԱՆ. Ե՞ս… Կներեի:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Ձեր կնոջ անպատվությունը…

ՄԻՀՐԱՆ. Այո:

ԵՎԳԻՆԵ. (Հանկարծ արձակում է թեթև ճիչ) Ա՛հ…

ԱՄԵՆՔԸ. Ի՞նչ պատահեց:

ՄԻՀՐԱՆ. (Վախեցած, ոտքի կանգնելով) Եվգինե.…

ԵՎԳԻՆԵ. Ոչինչ... (Աշխատում է ժպտալ): Կայծակը...

ՍԱՌԱՓՅԱՆ. (Մոտենալով լուսամուտին): Եվ ի՜նչ կայծակ: Ահա և սարսափելի որոտում: (Լսվում է որոտում):

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Եղիա մարգարեի քյուրքը ճղեցին:

ՍԱՌԱՓՅԱՆ. (Ծիծաղում է), Հա, հա, հա քյուրքը:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Մոտենում է Եվգինեին և սուր հայացքով նայում նրա երեսին): Դուք կայծակի՞ց եք ավելի վախենում, թե՝ փոթորիկից, (Եվգինեն տխուր ժպտում է): Ինչո՞ւ ընդհատեցիք հետաքրքրական խոսակցությունը: (Նստում են): Հա, ուրեմն, պարոն Միհրան, դուք կներեք:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Այդ ինձ համար անհասկանալի է:

ՏԻԿ. ՄԱՐԹԱ. Միհրան, այդ ի՞նչ ես ասում,

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Էդ հո՞ւնց կներեիր, խելքս իսկի պեն չի կտրում:

ՍԱՌԱՓՅԱՆ. Այո, հունց:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. (Ոտքի է կանգնում, հանկարծ ոգևորվելով) Չեմ հասկանում, ինչու է ձեզ զարմացնում Միհրանի ասածը: Միթե տիկին Արարատյանն անբարոյական է եղել: Անպիտանի մեկը նրան մոլորեցրել է համարյա թե մանուկ հասակում — օրիորդը տասնուհինգ տարեկան է եղել: Մի՞թե դա այնպիսի մեծ հանցանք է, որի համար ամուսինը պիտի տանջեր նրան մինչև ինքնասպանություն: Ասացեք, խնդրեմ, ո՞ր տղամարդն է մինչև

ամուսնությունը իրան մաքուր պահում: Կարո՞ղ եք ցույց տալ մի այդպիսի տղամարդ: Ինչո՞ւ կանայք ներում են մեր ամենազզվելի կեղտերը, իսկ մենք չենք ուզում ներել նրանց սխալը: Ես թույլ եմ տալիս, որ Արարաջյանը կարող էր չափազանց կատաղել կնոջ դեմ նրա անցյալի պատճառով: Թույլ եմ տալիս, որ նա պիտի իրան խայտառակված համարեր: Բայց ո՞ւր էր այդ մարդու ներքին դատավորը, որ հիշեցներ նրան իր սեփական անցյալը, ուր անշուշտ կան կեղտեր: Ինչո՞ւ թշվառ կինը ներել է նրան այդ կեղտերը, իսկ ինքը — ոչ: Որովհետև մեկը կին է, մյուսը տղամարդ. Որովհետև հասարակական կարծիքի ամբողջ լուծը կանանց վրա է ծանրացած: Բայց չէ՞ որ այդ անարդարություն է, սոսկալի անարդարություն: Եվ ինչու գոնե մի անգամ չբողոքել անարդարության դեմ: (Տիրում է մի քանի վայրկյան լռություն: Եվգինեն, իր խռովությունը թաքցնելու համար, մոտենում է դաշնամուրին և սկսում կամացուկ, դողդողուն ձեռներով և ներվային քրքրել նոտաները: Տ. Գալամքարյանը շարունակ դիտում է նրան, իսկ Սառափյանը դիտում է տիկ. Գալամքարյանին: Միհրանը, լսելով Վարսամյանին, հավանության նշաններ է անում):

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Տարօրինա՜կ բողոք, Մոռանամ հարազատ կնոջս կեղտը, թե ինչ է բողոքում եմ անարդարության դեմ: Ազատի՜ր ինձ այդ տեսակ բողոքից:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Սխալը, պարոն Սուլթանյան, և ոչ կեղտը, սխալը: Սակայն կարելի էր և կեղտը մոռանալ, եթե մեր աշխարհայացքն ավելի լայն լիներ: Ով գիտե, գուցե ապագայում հասկանանք, որ տղամարդի և կնոջ բարոյական պարտավորությունները հավասար են, հասկանանք նաև, որ հանցանք ներելը հանցանք գործել չէ: Իսկ սխալը, հափշտակվելը, անպիտաններից խաբվելն այժմ էլ կարող ենք ներել, պետք է ներենք, մինչև անգամ պարտավոր ենք ներել:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Այդ մասին ես ձեզ հետ կվիճեմ հետո: Այժմ թողնենք, տիկին Եվգինեն ձանձրանում է:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Ես այդ վաղուց եմ նկատում:

ՍԱՌԱՓՅԱՆ. Խնդրենք տիկնոջը, մեզ համար մի բան նվագի:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Այ, այդ ես հասկանում եմ, Տիկին, մի՜ զրկեք մեզ հաճույքից:

ՍԱՌԱՓՅԱՆ. Եվգինեն նազ անողներից չէ:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Ըմբո՜, խե պըտի նազ անի, խե, մունք հովընք:

Եվգինեն նստում է դաշնամուրի մոտ և նվագում է ձեռքին ընկած առաջին նոտան: Վարսամյանը և Մարթան մի անկյունում վիճում են: Միհրանը ծխելով անցուդարձ է անում խորքի պատի տակ հանդարտ քայլերով:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Առանձին, ամուսնուն) Նկատեցի՞ր քանի անգամ գույնը փոխեց:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Ա կնիկ, թողար տեսնենք, պեն չունիս..

ՍԱՌԱՓՅԱՆ. (Պաուզա: Լսում է, հետո) Հիանալի՜ է, հիանալի... Բայց այդ, կացեք, կացեք, այդ ծանոթ բան է…

ԵՎԳԻՆԵ. Շոպենի նոկտյուրն է «Կաթիլ» անունով. ես շատ եմ սիրում... ամբողջ օրը պյուպետրի վրա է… Ոչ — մելանխոլիա, ոչ — վիշտ, այլ հիվանդ հոգու տառապանք: (Կամաց-կամաց ձեռները թուլանում են, գլուխը թեքվում է կրծքին):

ՏԻԿ. ՄԱՐԹԱ.(Մոտենալով Եվգինեին) Ա՜հ, ի՞նչ պատահեց, դու գունատվեցիր: (Եվգինեն նվագում է): Ուշքը գնում է... Ջո՜ւր... (Բոլորը շփոթվում են, շրջապատելով Եվգինեին: Սառափյանը ջուր է մոտեցնում):

ՄԻՀՐԱՆ. (վախեցած) Եվգինե՜... (Չոքում է նրա առջև):

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Ամուսնուն) Լա՛վ ուշադրություն դարձրու, այդ բոլորը նրանից է…

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Փիե՛…

ԵՎԳԻՆԵ. (Ուշքի գալով) Ոչինչ, մի՛ վախենար: (Միհրանի օգնությամբ վեր է կենում, ճիգ անելով ժպտալ): Կայծակն ինձ վախեցրեց: (Հյուրերին) Ներեցեք, խնդրեմ, գլուխս պտտեց, ուրիշ ոչինչ… Անցավ, բոլորովին անցավ: Նստեցեք, ուրիշ բան կնվագեմ… (Սկսում է նվազել ուրախ բան: Բայց հյուրերն այնքան շփոթված են, որ չեն վստահանում ձանձրացնել տանտիրուհուն):

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Էդ մուզիկը որ կա մարդու արինը տակն ու վրա ա անըմ…

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. (Պաուզա) Գոնե ես չէի կամենալ ձեզ ձանձրացնել, տիկին: Դուք, երևի, տկար եք կամ հոգնած, հանգստացեք…

ՄԻՀՐԱՆ. (Դաշնամուրի կափարիչը ծածկելով): Ես քեզ արգելում եմ…

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Բարսեղ, գնա՛նք,

ՄԻՀՐԱՆ. (Տիկ. Գալամքարյանին) Դուք կներե՛ք…

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Ի՞նչ ներելու բան կա, Ես առանց այդ էլ երկար մնալ չէի կարող, ես գործով էի եկել: (Եվգինեին, որ տակավին գունատ կանգնած է դաշնամուրի: Չմոռանաք իմ առաջարկության մասին պարոն Միհրանից թույլտվություն խնդրե:

ՄԻՀՐԱՆ. Այդ ինչ թույլտվություն է:

ՍԱՌԱՓՅԱՆ. (Հեգնաբար) Տիկինը մի նոր ընկերություն է հիմնել, առաջարկում է Եվգինեին անդամ դրվել: Մի խոսքով, երկու հարյուր ռուբլու գործ է:

ՄԻՀՐԱՆ. Իմ ամուսինն ազատ է անելու ինչ որ ցանկանում է, իսկ իմ գրպանը միշտ նրա տրամադրության տակ է:

ՏԻԿ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. (Եվգինեին խորհրդավոր) Լսո՞ւմ եք, ազատ եք անելու, ինչ կամենում եք: Գնահատեցե՛ք, ցտեսություն:

Պ. ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ. Ձեզ տեսություն, Սռափով, թաթդ տոր տեսնեմ, քը մատաղ, (Սեղմում է ձեռքը):

(Հյուրերը գնում են. Միհրանն ու Մարթան ուղեկցում են նրանց մինչև, նախասենյակ):

ՍԱՌԱՓՅԱՆ. (Դռների մոտ, բոլորից թաքուն բռնելով Միհրանի թևը) Մոտդ հիսուն ռուբլի կա՞: (Միհրանը վարտիքի գրպանից հանում է ու տալիս երկու հատ ճխլտված 25-անոց): Մերսի՛… (Մոտենում է Եվգինեին, որ կանգնած է սենյակի մեջտեղում): Եվ շատ լավ ես անում, որ այդ խորամանկ տիկին Գալամքարյանին պատիվ չես անում մինչև նախասենյակ ճանապարհ դնելու: Հետո կասեմ պատճառը: Ցտեսություն: (Դռների մոտ հանդիպում է Միհրանին ու Մարթային) Ցտեսություն: (Գնում է):

ՏԵՍԻԼ 6

ԵՎԳԻՆԵ, ՄԻՀՐԱՆ ԵՎ ՏԻԿ. ՄԱՐԹԱ

Մինչև Միհրանի և Մարթայի վերադառնալն Եվգինեն ժողովում է ուշքը բոլորովին և ժպտում նրանց երեսին:

ՄԱՐԹԱ. Դու մեզ վախեցրիր, Եվգինե, մի՞թե կարելի է այդչափ ներվային լինել:

ԵՎԳԻՆԵ. Դատարկ բան էր, անցավ, չարժե մտածել.....

ՄԻՀՐԱՆ. Ես քեզ հարյուր անգամ խնդրել եմ, երբ տրամադիր չես — հյուրեր չընդունել: Ինձ համար քո հանգստությունն ամեն բանից թանկ է:

ՄԱՐԹԱ. Լրագրները ո՞րտեղ թողեցիր:

ԵՎԳԻՆԵ. Քո սենյակում, սեղանի վրա:

ՄԱՐԹԱ. Ընթրիքի չսպասեք ինձ: (Գնում է ձախ կողմի երկրորդ դռներով):

ՏԵՍԻԼ 7

ՄԻՀՐԱՆ և ԵՎԳԻՆԵ.

ՄԻՀՐԱՆ. (Պաուզա) Վերջապես, մենակ ենք: (համբուրում է) Նստի՛ր: Ես ուզում եմ մի բանի մասին խոսել քեզ հետ: (Նստում են բազկաթոռների վրա դեմ ու դեմ) Մի՛ վախենար, վախենալու ոչինչ չկա: Գիտես ինչ, Եվգինե ահա մի քանի ամիս է քեզ փոխված եմ տեսնում: Կարծես, քեզ անհանգստացնում է ինչ-որ վիշտ, հոգս, վերջապես, մի միտք և քանի գնում է, այդ փոփոխությունն ավելի ու ավելի նկատելի է դառնում: Ասա, ի՞նչ է պատահել:

ԵՎԳԻՆԵ.(Վեր կենալով) Այդ մասին այսօր ոչինչ մի՛ հարցրու:

ՄԻՀՐԱՆ. Ներողություն, դու իրավունք ունիս: Դու տկար ես, գնա, ուրեմն հանգստացիր: (Վեր է կենում):

ԵՎԳԻՆԵ.(Քնքշաբար) Նեղացա՞ր: (ժպտալով) Ես տկար չեմ, անցավ, մի նեղանար:

ՄԻՀՐԱՆ. Բայց դու ինձ խաբել չես կարող, դու մի հոգս ունիս, մի կեղծիր, կեղծելը քեզ չի սազում:

ԵՎԳԻՆԵ.(Հառաչելով) Չի սազում… (Ճակատը շփելով) Թո՛ղ ինձ, ես ուզում եմ քեզ համար նվագել…

ՄԻՀՐԱՆ. Երաժշտությունը քեզ հուզում է:

ԵՎԳԻՆԵ. Երբ հյուրերի ներկայությամբ եմ նվագում, իսկ երբ հյուրեր չկան, հանգստություն է տալիս իմ ներվերին: (Նստում է դաշնամուրի քով: Միհրանը տարակուսած կանգնում է նրա մոտ: Եվգինեն սկսում է նվագել ինչ-որ մելամաղձոտ եղանակ, բայց շուտով թողնում է և. գլուխը թեքում կրծքին ու լռում: Պաուզա) Ոչ, չեմ կարող, ձեռներս չեն շարժվում: (Միհրանն ուսերը բարձրացնելով, տարակուսած նայում է նրան շարունակ) Օհ, ի՜նչ տոթ է, կարծես, օդ չկա: (Վեր է կենում, լուսամուտներից մեկի վարագույրը հետ քաշում, հետո փեղկը բաց անում) Ի՜նչ հիանալի երեկո է, անձրևից հետո լուսին: Ի՜նչ մաքուր է երկինքը: (Մոտենում է և պակասեցնում բրոնզյա լամպարի լույսը: Ներս է սփռվում լուսնի մեղմ կաթնագույն լույսը):

ՄԻՀՐԱՆ. Բայց ցուրտ է, կարող ես մրսել, հեռու կաց: (Բռնում է թևից և լուսամուտից հեռացնում: Հետո լուսամուտը ծածկում է, լամպարի լույսն ավելացնում և նայում նրան ուշադիր):

ԵՎԳԻՆԵ. Երանի թե մրսեի ու հիվանդանայի: Երանի մեռնեի: Ա՜խ, տեր աստված, որքա՜ն անտանելի է:

ՄԻՀՐԱՆ. (Պաուզա) Եվգինե, նայիր ինձ... (Մոտենում է ու ձեռից բռնում) Ես քեզ միշտ խելոք կին եմ համարել…

ԵՎԳԻՆԵ. Խելո՛ք... մի ասա այդ բանը:

Լուռ տեսարան

ՄԻՀՐԱՆ. Դեհ, ասելո՞ւ ես, թե ինչի մասին ես մտածում:

ԵՎԳԻՆԵ. Ասե՞մ: Լա՛վ: Նստիր ահա այստեղ: (Նստում են) Լսի՛ր, ես վաղուց ուզում էի քեզ պատմել մի պատմություն, հեքիաթ, ինչպես կամենաս հասկացիր: Ես այդ կարդացել եմ չգիտեմ ինչ գրքում և երբ, բայց ինձ վրա շատ խոր ազդեցություն է արել: Լսո՞ւմ ես:

ՄԻՀՐԱՆ. Լսում եմ:

ԵՎԳԻՆԵ., Եղել է չի եղել, չգիտեմ ուր, ասենք հեռու Արևելքում, Արաբիայի, թե Հնդկաստանի մի հարուստ քաղաքում մի աղքատ այրի: Նրա ամուսինը, մի ազնիվ ու քաջ զինվոր, մեռնելով, իր կնոջ ու միակ աղջկա համար չի թողնում ոչ մի ժառանգություն, բացի իր զենքերը: Բայց աղջիկը մորից ժառանգում է մի հոգեկան հատկություն — ծայրահեղ ինքնասիրություն: Այդ աղջիկը ոչ շատ գեղեցիկ է եղել, ոչ տգեղ, ոչ շատ խելոք և ոչ հիմար: Մայրը սիրում է նրան ավելի, քան իր աչքի լույսը, փայփայում է մայրական անկաշառ սիրով, ոչինչ չի խնայում նրա համար, տալիս է նրան իր կարողությունից ավելի՝ ուսում և կրթություն:

ՄԻՀՐԱՆ. Այդ հետաքրքրական է, հետո՞…

ԵՎԳԻՆԵ. Մի օր այդ աղջկան տեսնում է մի ազնիվ, եռանդուն, խելոք մարդ (Նայում է Միհրանի աչքերին) մի խոսքով, մարդը հավանում է և իսկույն վճռում է նրա հետ ամուսնանալ: Մայրն ուրախությամբ համաձայնվում է: Աղջիկը չի սիրում այդ մարդուն, երկար ժամանակ կռվում է ինքն իր հետ, բայց հետո նույնպես համաձայնվում է... (Զգացված) իր մորը բախտավորացնելու համար: Նա ամուսնանում է ազնիվ մարդու հետ առանց սիրո, բայց հետո, երբ ճանաչում է նրան, սկսում է ոչ միայն սիրել, այլ ուղղակի պաշտել, պաշտել ինչպես կուռք: Իսկ բարի մարդը սիրում է նրան: Հավատում և շրջապատում է շքեղությամբ և այն բոլորով, ինչ որ գեղեցկացնում է կնոջ կյանքը...

ՄԻՀՐԱՆ. (Պաուզա) Հետո՞ ...

ԵՎԳԻՆԵ. (Հառաչելով ու ճակատը շփելով) Բայց շուտով մարդու երախտիքը սկսում է ուտել նրան — ուտել ցեցի պես: Չէ՞ որ նա չքավոր ծնողների զավակ է: Մարդը նկատում է նրա վիշտը և պատճառը հարցնում: Մի օր կինն ընկնում է նրա ոտներին և ասում. «քո անհուն սերն է ինձ տանջողը… ես մեծ պարտքի տակ եմ» — ահա իմ վիշտը: Ես ինքնասեր եմ, չեմ կարող տանել այդ պարտքը: Ազնիվ մարդն ապշած արտասանում է. «դու խելագար ես, առաջին անգամն եմ տեսնում, որ սիրող կինն իր ամուսնու սիրուց տանջվի»: «Այո, պատասխանում է կինը, քո սերն է ինձ տանջում: Մի սիրիր ինձ և ոչ միայն մի սիրիր, այլև ատիր, վարվիր հետս կոպիտ, ծեծիր ինձ… հայհոյիր, և ես պակաս կտանջվեմ»: (Պաուզա) Մարդը չի կատարում նրա տարօրինակ խնդիրը: Այն ժամանակ ինքնասեր կինը կամաց-կամաց մաշվում է վշտերից, թոքախտ է ստանում ու մեռնում: (Պաուզա) Ահա և ամբողջ հեքիաթը: (Վեր է կենում):

ՄԻՀՐԱՆ. (Որ խորասուզված լսում է մինչև վերջը, մի փոքր լռությունից հետո) Եվ դա հեքիա՞թ է…

ԵՎԳԻՆԵ. Հեքիաթ…

ՄԻՀՐԱՆ. Դու բոլորը պատմեցիր:

ԵՎԳԻՆԵ. Բոլորը:

ՄԻՀՐԱՆ. (Ոտքի է կանգնում կամացուկ, նայելով Եվգինեի երեսին) Ոչ, կարծեմ մի բան մոռացար: Այդ հեքիաթն ինձ ծանոթ է: Ինքնասեր կինը լինում է բարոյապես իր մարդուց շատ բարձր: Այնքան բարձր, որ մարդու բոլոր արժանավորությունները նսեմանում են նրա մոտ: Ինքնասեր կինը լինում է այնքան գրավիչ, այնքան հրապուրիչ, որ իր մի ժպիտով վարձատրում է ամուսնու բոլոր բարությունները: (Համբուրում է): Եվգինե, դու չես կարողանում հեքիաթներ պատմել, ավելի լավն է պատմիր եղելությունը:

ԵՎԳԻՆԵ. Եղելությո՞ւն: (Պաուզա. Միհրանը նայում է նրան: Եվգինեն երկու ձեռները դնում է նրա ուսերի վրա, նայում աչքերին) Որքա՜ն բարություն կա քո աչքերում: Ձայնը դողդողում է) Իսկ ե՞ս... (Աչքերը լցվում են արտասուքով) Բավական է... (Ձեռները վերցնում է Միհրանի ուսերից և հեկեկալով վազում դեպի ննջարան):

ՄԻՀՐԱՆ. (Ապշած նայում է նրա հետևից ե երբ Եվգինեն բոլորովին անհետանում է: Պաուզա) Չեմ հասկանում... Ձեռքը սեղմում է ճակատին):

Վարագույր

ԱՐԱՐՎԱԾ Բ.

Նույն սենյակը, նույն կահ-կարասին ցերեկով: Կեսօրյա մեկ ժամն է: Լուսամուտները դեպի փողոց բաց են: Հատակի նաև կահ-կարասիի մի մասի վրա սփռվել են ապրիլյան արեգակի ախորժալի ճառագայթները:

ՏԵՍԻԼ 1

ՀՌԻՓՍԻՄԵ, ՄԱՐԹԱ, հետո ԵՎԳԻՆԵ.

ՀՌԻՓՍԻՄԵ. (Ներս է մտնում նախասենյակի դռներից գլխարկով ու վերարկուով: Նայում է շուրջը: Ոչ ոքի չտեսնելով, մոտենում է նախ Միհրանի առանձնասենյակի դռներին, ականջ դնում: Ձայն չլսելով, մոտենում է ննջարանի դռներին, ուզում է ներս մտնել, թողնում է մտադրությունը, հետ դառնում: Ձախ կողմի խորքի, այն է սեղանատան՝ դռներից ներս է մտնում Մարթան հագնված՝ գլխարկով): Ահ, ո՞րտեղ եք: (Համբուրվում են) Մտնում եմ ներս, ոչ ոք, աղախին էլ չկա, իսկ դռները բաց գողերի համար:

ՄԱՐԹԱ. Այդ, երևի, Միհրանն է մոռացել աղախնին կանչել, որ դռները փակի: Նա մոռացկոտ է:

ՀՌԻՓՍԻՄԵ. Ժենյան տա՞նն է:

ՄԱՐԹԱ. Այո: Ուշ է զարթնել, հագնվում է:

ՀՌԻՓՍԻՄԵ. Նոր: (Նայելով իր ժամացույցին) Մեկն է, չլինի թե հիվանդ է:

ՄԱՐԹԱ. Չգիտեմ, Բայց ահա և՛ ինքը, (Ներս է մտնում Եվգինեն ննջարանի դռներից: Նա հագած է տնային, բայց թանկագին կտորից նորաձև կարած շրջազգեստ) Բարի կեսօր...

ԵՎԳԻՆԵ. Այո, ուշ եմ զարթնել: Միայն լուսաբացին եմ աչքերս փակել: (Համբուրվում է մոր հետ):

ՀՌԻՓՍԻՄԵ. Ինչո՞ւ:

ԵՎԳԻՆԵ.Կարդում էի:

ՀՌԻՓՍԻՄԵ. Երբ պիտի ձեռք վերցնես կարդալուց: (Մարթային) Երեխայությունից գրքերի սիրահար է: Պատահել է, որ մի գիրք ուժով ձեռքից խլել եմ, թաքցրել, կես ժամ չանցած՝ մի ուրիշն է վերցրել: Ցավ է էլի:

ԵՎԳԻՆԵ. (Մարթային) Ո՞ւր ես այդպես պատրաստվում:

ՄԱՐԹԱ. (Ձեռնոցները հագնելով) Ուզում եմ տիկին Սուրաթյանին այցելել: Բայց առաջ պիտի մտնեմ տիկին Գալամքարյանի մոտ: Միհրանն ինձ տվեց 200 ռուբլի, որ այսօր անպատճառ տանեմ այն նոր ընկերության համար:

ՀՌԻՓՍԻՄԵ. (Եվգինեին) Մարգոն ի՞նչ է անում, ասա է:

ԵՎԳԻՆԵ. Դայակը նրան տարել է զբոսեցնելու: (Մարթային) Մի՛ տանիր այդ փողերը:

ՄԱՐԹԱ. Ինչո՞ւ:

ԵՎԳԻՆԵ. Ես այդպես եմ կամենում:

ՄԱՐԹԱ. Խնայողությո՞ւն է այդ, թե՞ կապրիզ:

ԵՎԳԻՆԵ. Ինչպես կամենաս — հասկացիր, միայն այդ փողերը մի տանիր:

ՄԱՐԹԱ. Լավ, Վերցրո՛ւ: (Տալիս է փողերը):

ԵՎԳԻՆԵ. Պահիր մոտդ, կվերադարձնես Միհրանին:

ՄԱՐԹԱ. Չեմ հասկանում միտքդ: Դեհ, ների՛ր, մայրիկ, ես շտապում եմ, բայց շուտով կվերադառնամ:

ՀՌԻՓՍԻՄԵ. Ես էլ երկար չեմ նստելու: (Մարթան գնում է):

ՏԵՍԻԼ 2

ԵՎԳԻՆԵ և ՀՌԻՓՍԻՄԵ

ԵՎԳԻՆԵ. Այդ ո՞ւր ես շտապում, մամա: Գլխարկդ վերցրու, միասին նախաճաշ կանենք:

ՀՌԻՓՍԻՄԵ, Չէ, պետք է գնամ հորաքրոջդ մոտ: Երկու ամիս է չեմ տեսել, ամոթ է: Նա քեզ շատ է սիրում, միշտ գովում է: Ով քեզ սիրում է, ես էլ նրան եմ սիրում: Դու ասա տեսնեմ, ինչո՞ւ այսօր աչքունքդ թթված է:

ԵՎԳԻՆԵ. Ասացի, որ անքուն եմ եղել:

ՀՌԻՓՍԻՄԵ. Ա՛խ, ճշմարիտ ասացիր: Ուշքս տեղը չէ: Գիտես, Ժենյա, քո պսակվելուց հետո ուշքս իսկի վրես չի լինում: Ուրախությունից է, ուրախությունից: Դու բախտավոր ես, ես էլ հարբածի պես եմ: Աչքիս լույս, հոգիս, (համբուրում է) օրից-օր սիրունանում ես, այ, ինչ ասել է լավ ապրել: Այդ ի՞նչ է, էլի նոր հագուստ: Ախ ոսկի է, ոսկի Միհրանը, թագուհու պես է պահում քեզ: Երեկ մոտս էր, հարյուրերորդ անգամ գովեց քեզ: Ինձանից էլ շնորհակալ է, որ քեզ նման աղջիկ եմ պահել, մեծացրել նրա համար: Նա շատ ուրախ է քեզանով, շատ...

ԵՎԳԻՆԵ.(Հեգնաբար ծիծաղելով) Ավելի կուրախանա, երբ ամեն բան կիմանա:

ՀՌԻՓՍԻՄԵ. Նա ամեն բան գիտե, ամեն բան, ես նրան բոլորը պատմել եմ: Նա այնպես սիրում է հորդ հիշատակը, որ ուզում է նրա անունով մի որդեգիր պահել:

ԵՎԳԻՆԵ. Այդ քեզ ի՞նքն ասաց:

ՀՌԻՓՍԻՄԵ. Ինչպես չէ, հենց երեկ: Այ, կարծեմ, առաջիկա սեպտեմբերից, մեկին վերցնելու է:

ԵՎԳԻՆԵ. Ես չեմ թողնիլ:

ՀՌԻՓՍԻՄԵ. Բա՛հ, ինչո՞ւ:

ԵՎԳԻՆԵ. Չի հարկավոր: Առանց այդ էլ մենք նրան շատ ենք պարտական:

ՀՌԻՓՍԻՄԵ. Պարտական: Ինչո՞վ: Փառք աստծու, ուրիշ զոքանչների պես նրա շլինքին չեմ նստել ու նրա հացով չեմ ապրում:

ԵՎԳԻՆԵ. Ես նրան արժանի չեմ:

ՀՌԻՓՍԻՄԵ. Ո՞վ ասաց արժանի չես: Պոլկովնիկ Միրվելոի աղջիկն ո՞ւմ չի արժանի: Եթե նա բարի է, խելոք, փող շատ է աշխատում, պատիվ ունե, դու էլ գեղեցիկ ես, խելոք, հրեշտակի պես մաքուր...

ԵՎԳԻՆԵ. (Հառաչանքը թաքցնելով) Մաքուր, օ՜օ, տեր աստված, այս ինչ տանջանք է... (Վեր է կենում, մոտենում լուսամուտներից մեկին):

ԵՎԳԻՆԵ. (Արագությամբ իշխելով իրեն) Անքուն եմ, անքուն: Դու որ գնաս, ես պառկելու եմ անկողին...

ՀՌԻՓՍԻՄԵ. Շատ լավ կանես, որդի... ահա ես գնացի… (Համբուրվում է: Լսվում է գանգի ձայն):

ԵՎԳԻՆԵ. Ահա, տեսնո՞ւմ ես, մի ժամ հանգիստ չեն թողնում. Երևի հյուր է: Ես դեռ մազերս կարգի չեմ բերել: Մի փոքր սպասիր, ես իսկույն կգամ: (Գնում է ննջարանի դռներով: Երմոնեն ներս է հրավիրում Գաբրո Ազարյանին ասելով՝ «այստեղ են»):

ՏԵՍԻԼ 3

ՀՌԻՓՍԻՄԵ և ԳԱԲՐՈ ԱԶԱՐՅԱՆ

ԳԱԲՐՈ ԱԶԱՐՅԱՆ. (Հագնված է ճաշակով, նորաձև: Երեսին սիրալիր ժպիտ, ձևերը նուրբ, ձայնը մեղմ և բարեհամբույր: Հեռվից գլուխ տալով, մոտենում է Հռիփսիմեին) Հուսով եմ չեք մոռացել:

ՀՌԻՓՍԻՄԵ. Վահ. Գաբրո՛... Այդ ո՞ր աստծուց (Գաբրո Ազարյանը համբուրում է նրա ձեռը, իսկ նա Ազարյանի ճակատը):

ԳԱԲՐՈ. Փողի աստծուց, մայրիկ, մամոնայի: Ամենքը փողի համար այստեղ են վազում, ես էլ վազեցի:

ՀՌԻՓՍԻՄԵ. Շատ ուրախ եմ, որդի, համեցեք, նստիր, որտեղ քեֆդ է: (Գաբրոն նստում է բազկաթոռի վրա, սպասելով սակայն, որ նախ Հռիփսիմեն նստի): Վա՛հ, վա՛հ, աչքերիս չեմ հավատում: Ասա է, ի՞նչ կա, գործով ես եկել:

ԳԱԲՐՈ. Հապա: Ինձ ուղարկել են այստեղ իբրև ներկայացուցիչ մի նոր ընկերության:

ՀՌԻՓՍԻՄԵ. Հա, ով գիտե, հոր պիտի փորեք, նավթ հանեք…

ԳԱԲՐՈ. Այո, այդպիսի մի բան: Ասացեք, ինչպես եք, դուք, Եվգինեն: Լսել ենք, լսել ենք:

ՀՌԻՓՍԻՄԵ. (Պարծանքով ցույց տալով շուրջը) Տեսնում ես էլի, դիփ Ժենյայիս համար է սարքած:

ԳԱԲՐՈ. (Դիտելով շուրջը) Հիանալի է, շատ ուրախ եմ: Ասում են, շատ խելոք ու ազնիվ մարդ է ու շատ լավ փաստաբան:

ՀՌԻՓՍԻՄԵ Մի խոսքով, Ժենյաս բախտավորվեց, գոհություն աստծու: Էհ, ձերոնք ինչպե՞ս են:

ԳԱԲՐՈ. Իմ քույրն էլ անցյալ շաբաթ նշանվեց:

ՀՌԻՓՍԻՄԵ. Վա՜հ, ասա, որ ուրախանամ է: Ո՞րն է նշանվել:

ԳԱԲՐՈ. Փոքրը, Լիզան...

ՀՌԻՓՍԻՄԵ. Ո՞ւմ հետ:

ԳԱԲՐՈ. Մի բժիշկ ուսանողի:

ՀՌԻՓՍԻՄԵ. Աստված երկուսին էլ մեծ բախտի արժանացնի հավատա, որդի, քույրերիդ էլ ու քեզ էլ միշտ հարազատ որդուս պես եմ սիրել: Շատ ուրախ եմ: Աղջիկս բախտավորվելուց հետո, ուզում եմ, որ ամբողջ աշխարհը բախտավորվի: Ախ, ինչպե՜ս է սիրում, ինչպե՜ս է սիրում Ժենյայիս...

ԳԱԲՐՈ. (Ծխախոտի արծաթե տուփը գրպանից հանելով) Կարելի՞ է:

ՀՌԻՓՍԻՄԵ. Իհարկե, վա՜հ, մոռացե՞լ ես. որ ես էլ եմ ծխում:

ԳԱԲՐՈ. (Առաջարկում է ծխախոտ) Ես ձեր ոչ մի սովորությունը չեմ մոռացել: Այս շատ լավ պապիրոս է (Հռիփսիմեն վերցնում է ծխախոտ: Ազարյանը վառում է լուցկի, նախ տալիս է նրան ծխելու, ապա ինքն է ծխում) Ինքը Բոզարճյանցն է հատուկ ինձ համար պատվիրել իր գործարանում: Մի մեծ արկղ բերել եմ հետս: Եթե թույլ տաք, վաղը մի քանի հարյուր կուղարկեմ ձեզ համար:

ՀՌԻՓՍԻՄԵ. (Ծխելով) Շատ լավն է, Իսկի չես փոխվել, էլի էն Գաբրոն ես, միշտ քաղաքավարի, բարի, կավալեր.,.

ԳԱԲՐՈ. Իսկ դուք փոխվել եք, չաղացել եք, ջահելացել, սիրունացել…

ՀՌԻՓՍԻՄԵ. (Շոյված) Այս օրհնված քաղաքում ամենքը չաղանում են...

ԳԱԲՐՈ. Օրհնված: Այդ ինչի՞ցն է, որ ուրիշներն անիծում են այս քաղաքը, իսկ դուք օրհնում եք:

ՀՌԻՓՍԻՄԵ. Մեղք են գործում անիծողները, որդի, Այս քաղաքի նման քաղաք չկա: Քո Թիֆլիսն ի՞նչ է սրա մոտ, այստեղ ամեն բան լավ է: Մարդիկ խելոք են, աշխատասեր, իսկ բարությունն էլ մի ասա, այստեղ չար մարդ չկա: Մեկ էլ, որ այստեղ նախանձ չկա, որդի: Իսկ Թիֆլիսում, օհ, օհ, օհ, մարդ են ուտում: Եթե Ժենյաս այնտեղ այսպես բախտավորվեր, ո՜ւ ո՜ւ ո՜ւ, ամենքը նախանձից կտրաքվեին, էլ բան չէր մնալ — չհնարեն, որ աղջկաս իր մարդուց բաժանեն: Այստեղ մարդիկ ժամանակ չունին նախանձելու; Ահ, ինչ ուշացավ Ժենյաս: Ես մի քիչ վռազում եմ, որդի, կներես: Ահա գալիս է:

ԵՎԳԻՆԵ. (Ներս է մտնում և նկատելով Գաբրոյին, ցնցվում է, շփոթվում և մնում անշարժ):

ՏԵՍԻԼ 4

ՆՐԱՆՔ և ԵՎԳԻՆԵ

ՀՌԻՓՍԻՄԵ. (Ծիծաղելով) Չճանաչեց:

ԵՎԳԻՆԵ.(Մոտենում է սեղանատան դռներին՝ մտածում) Երմոնո՞, (Շտապով ներս է մտնում Երմոնեն: Եվգինեն ուզում է նրան մի բան ասել, բայց մտածում է, վճռական շարժումն է անում, հետո ձեռով նշան անում նրան հեռանալու: Երմոնեն գնում է զարմացած: Զարմացած է նաև Հռիփսիմեն):

ՀՌԻՓՍԻՄԵ. Ժենյա, չե՞ս ճանաչում Գաբրոյին, մեր բարի, քաղաքավարի հարևան Գաբրո Ազարյանին:

ԳԱԲՐՈ (Եվգինեն դուրս գալու րոպեից ոտքի է վեր կացել և անշարժ կանգնած ժպտալով սպասում է նրա հայացքին) Երևի, շատ փոխվել, ծերացել եմ: (Մոտենում է և, կամենում Եվգինեի ձեռը համբուրել):

ԵՎԳԻՆԵ. (Ձեռը կամացուկ, մորից թաքուն, խլում է նրանից) Բարև ձեզ...

ՀՌԻՓՍԻՄԵ. Հիմա ճանաչեցի՞ր:

ԳԱԲՐՈ. Աչքից հեռու — մտքից ընկած. Էհ, ինչպե՞ս կհրամայեք ձեզ անվանել այժմ: Առաջ ինձ համար փոքրիկ Ժենյա էիք, իսկ այժմ Եվգենիա Պա՞վլովնա, թե՞ տիկին Ալվերդյան: (Առանձին) Տեր աստված, որքա՜ն գեղեցկացել է:

ՀՌԻՓՍԻՄԵ. Գաբրոն ամեն բան լսել է Միհրանի մասին: ժենյա, շնորհավորիր նրան, Լիզան նշանվել է:

ԵՎԳԻՆԵ. (Անտարբեր) Այո՞:

ԳԱԲՐՈ. Այո, տիկին, թե՛ նշանվել է և թե՛ շուտով պիտի ամուսնանա — գիտեմ, բայց թե երկար ժամանակ կապրի մարդու հետ — աստված գիտե:

ՀՌԻՓՍԻՄԵ. Ի՞նչ ես ասում, որդի, ա՛յ ա՛յ ա՛յ: Նստիր: Ինչ ես կանգնել...

ԳԱԲՐՈ. Մեր ժամանակում կնոջ համար մարդուց բաժանվելն ավելի հեշտ է, քան ամուսնանալը:

ՀՌԻՓՍԻՄԵ. Էհ, դու էլի առաջվա կատակասերն ես: ժենյա, ես գնացի, բայց շուտով կգամ: (Գաբրոյին) Այսօր, երևի այստեղ կճաշես, իսկ վաղն անպատճառ իմ մոտն ես: Վեր է կենում:

ԵՎԳԻՆԵ.Մամա, աշխատիր շուտով վերադառնալ, գործ ունեմ:

ՀՌԻՓՍԻՄԵ. Լավ, լավ: (Գնում է):

ՏԵՍԻԼ 5

ԵՎԳԻՆԵ և ԳԱԲՐՈ ԱԶԱՐՅԱՆ

ԵՎԳԻՆԵ.(Ուղեկցում է մորը մինչև նախասենյակ, սպասում է, մինչև նրա բոլորովին դուրս գնալը և դռները ծածկում, հետո մոտենում է սեղանատան դռներին, նայում դեսպի ներս, դռները ծածկում, հետո կանգնում է բեմի մեջտեղում ու նայում Գաբրոյին ոտից մինչև գլուխ):

ԳԱԲՐՈ. (Ամբողջ ժամանակ ոտքի վրա աչքերով հետևում է նրան, նրա դեմքն արտահայտում է մերթ զարմացում և տարակուսանք, մերթ ուրախություն և հրճվանք) Վերջապե՜ս: (Հարձակվում է Եվգինեին համբուրելու):

ԵՎԳԻՆԵ. (Առանց տեղից շարժվելու. ձեռը բարձրացնում է այնպես խիստ, որ Ազարյանը բևեռվում է տեղն ու տեղը, հետո նայում է նրան խորին արհամարհանքով, մի փոքր ժամանակ լռություն) Ես դրա համար չառանձնացա ձեզ հետ:

ԳԱԲՐՈ. (Տակավին ձևացնում է, թե չի հասկանում նրա իսկական տրամադրությունը, ժպտում է) Ներիր, մոռացա, կնոջ համար զգուշությունը կես առաքինություն է:

ԵՎԳԻՆԵ. (Մղելով ինքն իր հետ կռիվ, որպեսզի կարողանա սառնարյուն լինել) Ինչո՞ւ եք եկել:

ԳԱԲՐՈ. Ահա սիրող և հարգող բարեկամի համար ավելի քան անհասկանալի մի հարց: Ների՛ր, Ժենյա, չէի սպասում:

ԵՎԳԻՆԵ. (Վրդովվելով նրա սառնությունից): Մի՛ համարձակվեք ինձ հետ խոսել եզակի:

ԳԱԲՐՈ. (Փոքր ինչ շփոթվում է, սակայն իսկույն իշխում է իրան և Եվգինեի տրամադրությունը կատակի վերածում) Կարծեմ վարագույրների հետևում ոչ ոք չի թաքնված, թե՞ աղախինը սովորություն ունի դռան հետևից ականջ դնելու: Գեղեցկության թշնամին բամբասանքն է, իսկ բամբասանքի աղբյուրը — ծառաները: Մի պահեք, տիկին, հայ ծառաներ. նրանք չափից դուրս հետաքրքիր են…

ԵՎԳԻՆԵ. Թողե՛ք ձեր կատակները և պատասխանեցեք ինչո՞ւ համար եք եկել:

ԳԱԲՐՈ. Զարմանալի հարց, եկել եմ ինչպես ուրիշները, գործով, պաշտոնով…

ԵՎԳԻՆԵ. Իմ տունը, այստե՞ղ:

ԳԱԲՐՈ. Ա՛, այդպես ասացեք: Այցելության: Չէ՞ որ մենք բարեկամներ ենք…

ԵՎԳԻՆԵ. Ուրեմն, լսեցեք, այդ կլինի ձեր առաջին և վերջին այցելությունը: Այս մեկ: Երկրորդ՝ դուք չեք համարձակվիլ ոտք դնել իմ մոր տունը: Հասկանո՞ւմ եք: (Արտասանելով այս խոսքերը, մոտենում է լուսամուտներից մեկին և հայացքը հառում դեպի փողոց):

ԳԱԲՐՈ. (Հիասթափված, լռում է, խորհում, հետո) Արդյո՞ք, խիստ չե՞ք վարվում ինձ հետ:

ԵՎԳԻՆԵ.(Տակավին պահպանելով սառնարյունություն) Համենայն դեպս, վարվում եմ ավելի մեղմ, քան դուք վարվեցիք ինձ հետ:

ԳԱԲՐՈ. Ես ձեր վրա բռնություն գործ չեմ դրել:

ԵՎԳԻՆԵ.(Երեսն արագ դարձնելով դեպի նա) Բռնություն: Դուք ավելի լավ միջոց եք գործ դրել: Եթե լինեիք ավազակ և ինձ անպատվեիք, այսօր ես հազար անգամ պակաս կտանջեվի: Բայց ոչ, դուք հափշտակեցիք ինձ քաղցր լեզվով, որ սրից ու կրակից զորեղ է: Չեմ հերքում, դուք ինձ դուր էիք գալիս, որովհետև գեղեցիկ էիք, բայց մի մոռանաք, որ կյանքն ինձ համար մի մթին աշխարհ էր: Ճշմարիտ է, մի օր դուք ինձ թվացիք ասպետ: Այնպիսի ասպետ, որ պատրաստ էր իր կյանքը վտանգի ենթարկել մի խեղճ աղքատ — աղջիկ կրակից ազատելու: Բայց ինչ գիտեի, որ կրակը հենց դուք ինքներդ եք: (Սկսում է անցուդարձ անել):

ԳԱԲՐՈ. Չգիտեի, որ իմ սերը ձեզ համար կրակ էր:

ԵՎԳԻՆԵ. Սե՛ր: (Դառն ծիծաղ): Հա, հա, հա՛, սե՛ր: Ծաղր, խաբեություն, անարգանք և ոչ սեր: Ես մինչև այսօր չեմ կարողանում ինձ հաշիվ տալ, ինչպես պատահեց այդ: Բայց այդ օրն ես ոչ միայն հավատում էի ձեզ, այլև հաճելի էր ինձ հավատալ: Եվ դուք, օգտվելով այդ

բանից, գործ դրեցիք ձեր լեզուն, այդ թունավոր դեղը: Նա կամաց-կամաց վարակում էր արյունս, սպանում էր իմ մեջ ամոթի զգացումը, և սպանեց: (Ընկղմվում է գահավորակի վրա և երեսն ամոթից ձեռներով ծածկում):

ԳԱԲՐՈ. (Լսում է նրան, հեռվում կանգնած, հետո մի քանի քայլ մոտենում) Եվգինե, այդ բոլորն անցած բաներ են: Ինչո՞ւ եք քրքրում անցյալն և ինքներդ ձեզ տանջում: Այն օրից հետո մենք մի քանի տարի էլ եղել ենք հարևաններ և... բարեկամներ:

ԵՎԳԻՆԵ. Ես ձեզ երբեք չեմ սիրել:

ԳԱԲՐՈ. Բայց չեք էլ ատել, երբեմն մինչև անգամ թույլ եք տվել ձեզ փաղաքշելու: Մի՞թե կարող եք հերքել այդ:

ԵՎԳԻՆԵ.(Ցնցվելով): Օհ, զզվելի՜ որպեներ:

ԳԱԲՐՈ. Ինչո՞ւ: Զզվելի կլիներ այն ժամանակ, եթե այդ օրից հետո ձեզ չհամբուրեի: Բայց ես ոչ միայն համբուրում, այլև սիրում էի ձեզ: Այո, այո, սիրում էի և, վկա է աստված, ուրախությամբ կամուսնանայի ձեզ հետ, եթե հանգամանքները ներեին: Իմ վզին մեծ լուծ կար մայրս և քույրերս: Ավելացրեք և այն, որ այդ միջոցին ես անգործ էի: Այժմ, Եվգինե, պետք է մոռանալ անցյալն և ապրել նոր զգացումներով: Դուք ժամանակակից կին եք, կրթված, զարգացած, դուք պիտի հեռու լինեք նախապաշարումներից:

ԵՎԳԻՆԵ.(Գլուխը բարձրացնելով, վեր է կենում): Հետո՞... Հետո՞...

ԳԱԲՐՈ. (Խրախուսվելով): Այն օրից անցել է ինը տարի — մի ամբողջ հավիտենականություն: Դուք տեղափոխվել եք օտար քաղաք, հաջող կերպով ամուսնացել և ահա մի տարուց ավել է, վայելում եք հանգիստ ամուսնական կյանք: Այժմ ոչ ոք չգիտե ինչ է եղել ձեր անցյալում, ոչ ոք, բացի ինձանից…

ԵՎԳԻՆԵ.(Զայրացած): Ոչ ոք: Սուտ եք ասում: Որ դուք գոնե մի անգամ պարծեցած չլինեք ձեր հաղթությամբ, դու՞ք. հա, հա, հա: Ո՞վ չգիտե, որ դուք և ձեզպեսները հենց նրա համար եք ինձ նմաններին մոլորեցնում, պատվից զրկում, որ հետո պարծենաք: Դա ձեր հերոսությունն է: Բայց բավական է: Լսեցե՛ք, ես ոչ միայն չեմ աշխատի ձեր լեզվի վրա որևէ սանձ դնել, այլ կազատեմ նրան ամեն մի սանձից: (Սկսում է անցուդարձ անել):

ԳԱԲՐՈ. (Ապշելով): Այդ ինչպե՞ս:

ԵՎԳԻՆԵ. Կարդացե՞լ եք Արաբաջյանի մասին լրագրերում:

ԳԱԲՐՈ. Ի՞նչ եք ուզում ասել:

ԵՎԳԻՆԵ. Այն, որ ես կհետևեմ այն թշվառ կնոջ օրինակին:

ԳԱԲՐՈ. Եվ կխոստովանեք ձեր ամուսնուն:

ԵՎԳԻՆԵ. Այո՛:

ԳԱԲՐՈ. (Պաուզա): Դուք չեք անիլ:

ԵՎԳԻՆԵ. Եվ ո՞վ կարգելի ինձ:

ԳԱԲՐՈ. Դուք չեք կամենալ ձեզ կործանել:

ԵՎԳԻՆԵ. Լավ է կործանվել, քան թե ապրել այնպես, ինչպես այժմ:

ԳԱԲՐՈ, Չէ՞ որ ձեր ամուսինը ձեզ սիրում է ու հավատում, կնշանակե նա ձեզ համարում է անարատ:

ԵՎԳԻՆԵ. Այո, բայց ես խիղճ ունիմ:

ԳԱԲՐՈ. Եվ մի՞թե այդ խիղճը թույլ կտա ձեզ մի հարվածով կործանել երեք կյանք: Ասում են ձեր ամուսինը լավ մարդ է: Եթե ձեզ չեք խնայում, խնայեցեք գոնե նրան:

ԵՎԳԻՆԵ. Խնայել խաբելո՞վ, խնայել ստորությա՞մբ, խնայել այնպես, ինչպես խնայել եմ մինչև այժմ: Օհ, ոչ, դա խնայել չի նշանակում, այլ բարոյապես կողոպտել մի ազնիվ մարդու: Գիտե՞ք ինչ ասել է խղճի խայթոց: Օհ, ոչ, եթե գիտենայիք — այս տունը ոտք չէիք դնիլ: Իսկ ես գիտեմ: Մի տարի է նա ինձ տանջում է: Սկզբում դեռ ոչինչ, որովհետև գիտակցությունս թմրած էր, որովհետև Ալվերդյանին չէր սիրում, որովհետև ամուսնացել էի նրա հետ հենց այնպես, ինչպես ամուսնանում է առհասարակ կանանց մեծ մասը: Բայց հետո սկսվեց տանջանքս, երբ սիրեցի նրան: (Թեթև պաուզա): Անցյալ օրը, երբ այստեղ խոսում էին Արաբաջյանի մասին, հազիվ զսպեցի ինձ, որպեսզի հենց հյուրերի ներկայությամբ չընկնեմ ամուսնուս ոտներին և չասեմ. «Ես, ես մի տիկին Արաբաջյան եմ»: (Պաուզա): Բայց այն, ինչ-որ չարեցի այն օրը, կանեմ այսօր, որովհետև պարտավոր եմ անելու և չեմ կարող չանել: (Ընկղմվում է բազկաթոռի վրա և աչքերը հառում դեպի անորոշ տարածություն):

ԳԱԲՐՈ. (Մի փոքր լռությունից հետո անվստահ քայլերով մոտենում է, կանգնում նրա գլխի մոտ: Պաուզա); Ես լսել եմ, որ դուք ունիք մի սիրուն երեխա…

ԵՎԳԻՆԵ. (Ցնցվում է) Երեխա՛…

ԳԱԲՐՈ. Որին, երևի սիրում եք ,թե՛ դուք և թե՛ ձեր ամուսինը:

ԵՎԳԻՆԵ. Խե՛ղճ փոքրիկ:

ԳԱԲՐՈ. Ահա հենց այդ խեղճ փոքրիկի համար դուք պիտի խնայեք ձեզ…

ԵՎԳԻՆԵ.(Տակավին ինքնամոռացության մեջ): Խե՛ղճ Մարգո…

ԳԱԲՐՈ. Մի մոռանաք և՛ ձեր մորը...

ԵՎԳԻՆԵ. (Ուշքի գալով): Մա՛յրս,.,

ԳԱԲՐՈ. Այո, այդ բարի և միամիտ կնոջը…

ԵՎԳԻՆԵ. (Արագությամբ ոտքի է կանգնում կատաղած) Որի բարեկամությունը դուք այդպես ապականեցի՞ք: Օ՛հ, բավական է, հեռացեք...

ԳԱԲՐՈ. Կհեռանամ, իհարկե, բայց խոսք տվեք, որ չեք կատարիլ ձեր անմիտ վճիռը:

ԵՎԳԻՆԵ. Ի՞նչ, ի՞նչ իրավունքով եք պահանջում ինձնից այդպիսի խոսք:

ԳԱԲՐՈ. Սիրող մարդու իրավունքով:

ԵՎԳԻՆԵ. Սե՞ր… Մի՛ սրբապղծեք այդ բառը: Կան բերաններ, որոնք իրավունք չունեն նրան արտասանելու: (Զսպելով իր հուզումը, մոտենում է սեղանատան դռներին):

ԳԱԲՐՈ. Ի՞նչ եք կամենում անել:

ԵՎԳԻՆԵ. Կանչել աղախնին, որ ձեր վերարկուն պահի:

ԳԱԲՐՈ. (Պաուզա, որի միջոցին Գաբրոյի մեջ տեղի է ունենում հոգեկան պատերազմ, նա ճանաչում է Եվգինեի հոգին): Ես կգնամ առանց աղախնի օգնության էլ: Բայց, աստված սիրեք, մի՛ կործանեք ձեզ: Գուք այդքան երիտասարդ եք, գեղեցիկ, կյանքը ձեզ ժպտում է, երես մի՛ դարձնեք նրանից: Եվգինե, ես ձեզ լավ չէի ճանաչում, այժմ ճանաչեցի:

Խոստովանում եմ, ես ձեզ համարում էի մեկը այն կանանցից, որոնք… որոնք… այդչափ լուրջ չեն նայում կյանքին… բայց աչքերս բացվեցին և այժմ ձեզ տեսնում եմ ձեր իսկական գույնով: Ես մոլորված էի և ահա այժմ զղջում եմ… գոնե այս բանին հավատացեք..,

ԵՎԳԻՆԵ.(Հեգնական դառն ծիծաղով): Հա, հա. հա, զղջում եմ, հա, հա, զղջում եմ, այդպես շուտ (Պաուզա): Բավական է, բավական է, այս որպեին ամուսինս կարող է գալ. ես չեմ ուզում, որ գաք հանդիպեք միմյանց: Գնացե՛ք…

ԳԱԲՐՈ. (Ամոթից ընկճված) Եվգինե՛…

ԵՎԳԻՆԵ. Գնացեք, գնացեք, խնդրում եմ, ես առանց այդ էլ շատ եմ տանջվում: Մոտենում է նախասենյակի դռներին:

ԳԱԲՐՈ. Գոնե մի մեղմ հայացք, ներման մի թույլ ժպիտ:

ԵՎԳԻՆԵ.(Առանց նայելու նրան, տանջանքով ցույց է տալիս ձեռքով դռները: Գաբրոն մոտենում է դռներին, տակավին հուսալով, որ Եվգինեն կմեղմանա: Բայց տեսնելով, որ նրա դեմքի արտահայտությունը չի փոխվում, գնում է ամոթահար հանդարտ քայլերով):

ԵՎԳԻՆԵ.(Սպասում է մինչև Ազարյանի հեռանալը, ծածկում է դռները, ընկղմվում աթոռի վրա և գլուխը դնելով թևերի վրա, դառն հեկեկում է: Այնուհետև, մի վհատական շարժում անելով, ոտքի է կանգնում, աչքերը սրբում, ուշքը ժողովում, մի քանի վայրկյան անցուդարձ է անում: Հետո մոտենում է սեղանատան դռներին, բաց է անում: Ներս է մտնում աղախինը):

ՏԵՍԻԼ 6

ԵՎԳԻՆԵ և ԵՐՄՈՆԵ

ԵՎԳԻՆԵ. Դայակը վերադարձա՞վ:

ԵՐՄՈՆԵ. Իսկի էլ չէ: Կոֆեն պատրաստ է:

ԵՎԳԻՆԵ. Հավաքիր: Ես չեմ ուզում: (Պաուզա: Երմոնեն ուզում է գնալ, լսվում է գանգի ձայն): Երևի, պարոնդ է: (Երմոնեն գնում է նախասենյակի դռներով; Եվգինեն իշխում է իրան, ուշքը բոլորովին ժողովելով և նստում դաշնամուրի մոտ: Նվագում է ուրախ եղանակ):

ՏԵՍԻԼ 7

ՄԻՀՐԱՆ և ԵՎԳԻՆԵ

ՄԻՀՐԱՆ. (Հագած է ֆրակ: Նա գալիս է դատարանից և շատ ուրախ է: Դռների առջև պորտֆելը տալիս է Երմոնեին, որ իսկույն տանում է նրա առանձնասենյակը, կրկին հետ դառնում սեղանատուն):

Ահա, այդ ինձ դուր է գալիս, եթե գործից վերադառնալիս քեզ տեսնում եմ դաշնամուրի մոտ, հագնված, ուրախ, մոռանում եմ հոգնածությունս: (Մոտենում է ու համբուրում): Շարունակի՛ր, շարունակիր, ես ուրախ տրամադրության մեջ եմ... մի գործ տարեցի փառահեղ կերպով: Դատարանն արդարացրեց այն անմեղ թուրքին, որին թշնամիները ցույց էին տվել իբրև եղբայրասպան: (Նստում է մոտը): Պետք է տեսնեիր, թե խեղճն ուրախությունից ինչպես էր լալիս: Օ՜օ, որպիսի հոգեկան երջանկություն է տեսնել անմեղին շղթաներից ազատված և զգալ, որ նրա ազատության մեջ դու էլ դեր ես կատարել: Նվագիր՛ր, նվագի՛ր այդ եղանակը համապատասխանում է իմ հոգեկան տրամադրությանը...

ԵՎԳԻՆԵ.(Վերջացնելով նվագումը: Պաուզա): Շո՞գ է դրսում:

ՄԻՀՐԱՆ. Վատ չէ: Բայց երկու շաբաթ ևս և աֆրիկյան տաքերը կսկսվեն: Էհ, հոգ չէ, կփախչենք: Լսի՛ր, մայիսի մեկից մինչև սեպտեմբեր բոլոր գործերս հանձնում եմ Համազասպին և չորս ամիս քեզ հետ պտտում եմ Եվրոպայում: Այո, այո, դու պետք է տեսնես թե ինչպես են ապրում քաղաքակիրթ ազգերը: Հույս ունեմ, որ չես ասիլ, թե վատ միտք է: (Բեռները վերցնում է իր ձեռների մեջ):

ԵՎԳԻՆԵ. Մի՞թե քո գլխում կարող է վատ միտք ծագել:

ՄԻՀՐԱՆ. Օհ, մի՛ ասա, երբեմն շատ՛ վատ մտքեր են ծագում: Օրինակ, այն երեկո, այն ի՞նչ հեքիաթ էր, սա՞: Աստված գիտե մի վայրկյանում ինչեր զգացի: Բայց հետո բանը հասկացա: Երեխա, ինչո՞ւ մինչև հիմա ինձանից թաքցնում էիր... (Նայում է Եվգինեի աչքերին խորհրդավոր): Մի՞թե սիրող հայր չեմ… Իհարկե, իհարկե, այդ դրության մեջ կնոջ բնավորությունը փոխվում է: Բայց, ի սեր աստծու, կապրիզներ որքան քեֆդ է ունեցիր, միայն ինձ մի վշտացրու: Եթե ոչ, գիտե՞ս, իրավաբան եմ, օրենքով կդատեմ, մեկ էլ տեսար որոշեցի — զրկել բոլոր իրավունքներից և աքսորել ոչ այնքան հեռու տեղեր, այսինքն — խոհանոց, որ ինձ համար ձվածեղ պատրաստես: Աա՞, կերթա՞ ս...

ԵՎԳԻՆԵ. Ուրախությամբ: (Հեռանում է):

ՄԻՀՐԱՆ. Օ, գիտեմ, կերթաս: Դու խոհանոցից սարսափող կանանցից չես. այն կանանցից, որոնք իրենց սալոններումն են խոհարարուհի: Բայց ևս քեզ չեմ ուղարկիր: Որ այդ քնքուշ ձեռները կոշտանան: Երբեք, փառք աստծու, քո բախտից իմ գործերն այնքան լավ են գնում, որ կարող ես մեկի տեղ երեք խոհարար պահել: Սակայն... (Վեր է կենում) սաստիկ ցանկանում եմ Մարգոյին համբուրել: Հուսով եմ, որ մեր նազելի օրիորդը տանն է:

ԵՎԳԻՆԵ. Ոչ:

ՄԻՀՐԱՆ. Ա՛ա, թափառական, երբեք տանը չի նստում: Բայց եղանակը լավ է, թող ազատ օդ շնչի: Բա՛ա , քիչ էր մնում մոռանայի: Սպասի՛ր: (Մոտենում է սեղանատան դռներին): Երմոնե՛, Երմոնե՛: Այստեղ բեր պորտֆելս: (Վերադառնում է Եվգինեի մոտ: Երմոնեն բեմով անցնում է Միհրանի առանձնասենյակը): Իհարկե կտեսնես, մի թեթև սյուրպրիզ: Վաղուց է քեզ նվերներ չեմ արել: Բայց թույլ տուր կանխավճարը ստանալ... (Գրկում է Եվգինեին և համբուրում):

ԵՎԳԻՆԵ.(Առանձին): Օ՛օ, ինչ տանջանք: Աստվա՛ծ իմ... (Երմոնեն բերում է պորտֆելը):

ՄԻՀՐԱՆ. (Առնելով պորտֆելը, աղախնին նշան է անում հեռանալու: Երմոնեն գնում է սեղանատան դռներով: Միհրանը բաց է անում պորտֆելը, հանում է մի քանի ակցիաներ և առաջարկում է Եվգինեին): Ահա, այս բոլորն այսօր, դատարան գնալիս, մտա «Եդիգարով և ընկերություն» գրասենյակն և գնեցի քո ու Մարգոյի անունով: Վերցրու, փոխարենը մի օժիտ, օ՛օ, ոչ, մի համբույր... (Համբուրում է):

ԵՎԳԻՆԵ. (Որ ամեն անգամ ամուսնու համբույրից ցնցվում է, վերցնում է թղթերը, նայում): Ի՞նչ բաներ են:

ՄԻՀՐԱՆ. Նավթային ընկերության ակցիաներ:

ԵՎԳԻՆԵ. Ոչինչ չեմ հասկանում այս թղթերից: (Դնում է թղթերը դաշնամուրի վրա):

ՄԻՀՐԱՆ. Քո ի՞նչ բանն է: Դու ուրիշ հոգով ես կրթված: Հայրդ զինվորական է եղել: Նա քո մոտ միշտ խոսել է հրացանների ու թնդանոթների մասին: Բայց, սիրելիս, ժամանակիս զորեղ զենքերից մեկն էլ այդ թղթերն են: Պահիր քեզ համար, տարվա վերջը դիվիդենտ կստանաս: (Ուզում է գրկել):

ԵՎԳԻՆԵ.(Հետ է քաշվում) Ա՛հ…

ՄԻՀՐԱՆ. Դու չես ուզում, որ քեզ համբուրեմ:

ԵՎԳԻՆԵ.(Ճիգ է անում ժպտալ): Այո, չեմ ուզում:

ՄԻՀՐԱՆ. Ա՜. հասկանում եմ, դու ինքդ ես ուզում համբուրել:

ԵՎԳԻՆԵ.(Ոտքի կանգնելով) Աստված իմ, այլևս ուժ չմնաց ինձանում…

ՄԻՀՐԱՆ. (Նկատելով նրա այլայլվելը): Ի՞նչ ասացիր... ուժ չմնա՞ց,...

ԵՎԳԻՆԵ. (Նայելով լուսամուտով դեպի փողոց): Այո, չմնաց,..

ՄԻՀՐԱՆ. (Ոտքի կանգնելով) Եվգինե՞...

ԵՎԳԻՆԵ.(Երեսը դարձնելով նրան) Ի՞նչ ես կամենում ինձանից, ի՞նչ…

ՄԻՀՐԱՆ. Եթե հիվանդ ես, պիտի բժիշկ հրավիրել (Ուզում է մոտենալ դռներին):

ԵՎԳԻՆԵ. Ոչ, ոչ, հարկավոր չէ: Օհ, երանի թե հիվանդ լինեի:

ՄԻՀՐԱՆ. Ասա, ի՞նչ է պատահել: Կարելի է ազգականներիդ մասին վատ լուր ես լսել, գուցե մայրդ հիվանդ է կամ մի կարիք ունի: Ասա, չէ՞ որ ես քեզ համար ոչինչ չեմ խնայում: Եվգինե՛… (Գրկում է):

ԵՎԳԻՆԵ. (Ազատվելով նրա գրկից) Թո՛ղ, մի՛ գրկիր ինձ…

ՄԻՀՐԱՆ. (Ավելի ու ավելի զարմանալով, դարձյալ մոտենում է նրան ու գրկում: Այս անգամ Եվգինեն ուղղակի հրում է նրան): Դու ինձ հրո՞ւմ ես:

ԵՎԳԻՆԵ. Ոչ — քեզ, այլ ինձ եմ հրում քեզանից, ի՜նձ...

ՄԻՀՐԱՆ. Եվ դա… կատակ է...

ԵՎԳԻՆԵ. Կատա՞կ... տանջանք է:

ՄԻՀՐԱՆ. Ո՞վ է տանջվում, ինչո՞ւ:

ԵՎԳԻՆԵ. Նա, որ արժանի է տանջվելու և շուտով նա, որ արժանի չէ... (Արտասանում է խուլ ձայնով, հազիվ զսպելով հեկեկանքը:

ՄԻՀՐԱՆ. (Ճակատը շփելով): Ահա հանելուկ... «Նա, որ արժանի է և շուտով նա, որ արժանի — չէ»: Ոչինչ չեմ հասկանում, ոչինչ... բայց… դու սխալվում ես, դու հիվանդ ես, զառանցում ես... Եվգինե, վատ մտքեր են ծագում գլխումս, իմ մեջ կասկածներ են հղանում... պարզ խոսիր... (Եվգինեն լուռ է): Վերջապես այդ չափից դուրս է... (Մոտենում է և բռնում նրա ձեռքը):

ԵՎԳԻՆԵ. (Նայելով Միհրանին վշտալի հայացքով): Եվ ինչո՞ւ: Ինչու դու ուրիշ մարդ չես, կոպիտ, գռեհիկ, չար մարդ: (Ձեռն ազատում է նրա ձեռից և հեռանում):

ՄԻՀՐԱՆ. (Ապշած բևեռվում է միևնույն տեղում, աչքերը հառելով Եվգինեի վրա: Պազուա): Ա՜ա....

ԵՎԳԻՆԵ.(Պաուզա); Ինչո՞վ պիտի վարձատրեմ քո բոլոր բարությունները, եթե ոչ... անկեղծությամբ: Այո, այո, միմիայն անկեղծությամբ: Մի՜ նայիր ինձ այդպես, քո հայացքն ինձ կսպանե …

ՄԻՀՐԱՆ. Վախենո՞ւմ ես, այո՞, վախենում ես: (Լռում է և շարունակ նայում):

ԵՎԳԻՆԵ.(Մի քանի վայրկյան անցուդարձ անելով, հանկարծ կանգ է առնում նրա առջև): Մի հարց... (ճակատը շփելով, պաուզայից հետո վճռական շարժումն է անում): Այն երեկո դու ասում էիր, եթե դու լինեիր Արաբաջյանի տեղը, կներեիր կնոջդ անցյալը…

ՄԻՀՐԱՆ. Ասում էի, հետո՞...

ԵՎԳԻՆԵ. Արդյոք, համոզմունքով էիր ասում:

ՄԻՀՐԱՆ. Այդ ի՞նչ հարց է... (Պաուզա: Ձայնը բարձրացնում է): Այդ ի՞նչ հարց է... (Պաուզա: Բռնում է Եվգինեի ձեռն և ուժգին թոթափում): Ինչ հարց է ա՞յդ...

ԵՎԳԻՆԵ. Օհ, ինչ ամուր ես սեղմում ձեռս, դու երկաթի ուժ ունիս:

ՄԻՀՐԱՆ. (Տակավին բաց չթողնելով նրա ձեռը): Ասա, ինչո՞ւ ես հարցնում…

ԵՎԳԻՆԵ. Հարցնում եմ նրա համար, որ ես... ես… մի անպիտան կին եմ, ես... արժանի չեմ... որ ես մի… մի տիկին Արաբաջյան եմ…

(Արտասանելով այս բառերը, ձեռն, ազատում է Միհրանի ձեռից և թուլացած ընկնում է թախտի վրա: Երկարատև պաուզա, որի ժամանակ Միհրանը քարացած կանգնած է միևնույն տեղ, մի ուժեղ ցնցումից հետո: Իսկ Եվգինեն երկու ձեռներով երեսը ծածկած է: Վերջապես, Միհրանը շփում է աչքերը, նայում շուրջը, հետո ինքն իրան, կարծես, հավաստիանալու համար՝ երազումն է, թե արթուն):

ՄԻՀՐԱՆ. Այս ի՞նչ է… երազ.. թե՞… ցնորվել եմ… Բայց… կարծեմ, խելքս գլխիս է... Ահա նա, ահա մեր… հյուրասենյակը, ծանոթ իրեր… Օրը ցերեկով…. Իմ փաղաքշանքներից հետո... Հենց այստեղ, ինքն իր լեզվով: (Մոտենում է ու ձեռը բռնում): Հետ վերցրու ասածդ.. հետ վերցրու:

ԵՎԳԻՆԵ. Հազիվ կարողացել եմ ասել:

ՄԻՀՐԱՆ. (Թոթափելով նրա ձեռը ուժգին): Ուրեմն կատա՞կ չի այդ…

ԵՎԳԻՆԵ.(Խորին տանջանքով երեսը դարձնում է նրանից): Ո՞վ կարող է յուր ճակատագրի հետ այդպիսի կատակ անել: (Ձեռն ազատում է ու քայլերն ուղղում դեպի ննջարան):

ՄԻՀՐԱՆ. (Կտրելով նրա ճանապարհը): Ոչ, ոչ, ոչ, ասա, որ ինձ փորձում էիր ասա, որ ցնորված ես: Դեհ, ասա ... Աղաչում եմ, լսում ես, չեմ ստիպում, այլ աղաչում եմ, աղերսում եմ, լսի՛ր: Ես տանջվում եմ... Ժպտա, որ իմանամ, թե սուտ էր, որ ինձ փորձում էիր... Ես կտամ քեզ ամբողջ կյանքս մի վայրկյանում, միայն հերքիր, հերքիր ասածդ…

ԵՎԳԻՆԵ. Ես բոլորն ասացի:

ՄԻՀՐԱՆ. Ուրեմն չե՞ս հերքում… չե՞ս հերքում… Ա՜հ, գարշելի… (Ուզում է հարձակվել նրա վրա, բայց վայրկյանաբար զսպում է իրան): Գազա՜նը, գազա՜նը պիտի զսպել: (Ներս են մտնում տիկ. Հռռիփսիմեն և տիկ. Մարթան դրսի հագուստով և ապշած մնում):

ՄԻՀՐԱՆ. (Հեկեկալով փաթաթվում է քրոջ պարանոցին): Մա՛րթա, Մա՛րթա...

ԵՎԳԻՆԵ. (Ընկնում է մոր գիրկը):

Մարթան, կարծես, իրողությունը գուշակած, ատելությամբ լի հայացքով նայում է Եվգինեին: Իսկ Հռիփսիմեն ոչինչ չհասկանալով, ապշած նայում է Միհրանին:

Վարագույրն իջնում է հանդարտ

Արարված Գ

Բեմը ներկայացնում է Միհրանի ընդարձակ առանձնասենյակը: Երկու դուռ — խորքում և ձախ: Խորքինը տանում է նախասենյակ, որի մյուս կողմումն է Միհրանի փաստաբանական գրասենյակը, ձախինը տանում է հյուրասենյակ: Աջ պատի վրա՝ դեպի փողոց լուսամուտներ: Տնեցիներն մուտք ունին ձախի դռներից: Աջ պատի տակ դրած է Միհրանի գրասեղանը, վրեն հեռախոսի ապարատ, թանաքաման, թղթեր, պաշտոնական գործեր, խորքի պատի տակ գրքերի պահարան դարակներով, քովը երկաթե դրամարկղ: Ձախ կողմում կաշվեծածկ գահավորակ և բազկաթոռներ, սեղան, վրեն ամսագրեր: Մի տուփ՝ ծխախոտով լի և այլն: Հատակին սփռած է պարսկական գորգ: Պատերին մի քանի գրավյուրներ և մի քանի թատրոնական նշանավոր գործիչների, նաև եվրոպական հռետորների պատկերներ:

ՏԵՍԻԼ 1

ՎԱՐՍԱՄՅԱՆ ԵՎ ԳՐԱԳԻՐ

Վարագույրը բարձրանալիս Վարսամյանը, Միհրանի գրասեղանի մոտ կանգնած, թղթերի մեջ փնտրում է ինչ որ թուղթ, իսկ գրագիրը մի թերթ ձեռին, գրիչն ականջի վրա դրած, կանգնած է խորքի դռների առջև: Մի քանի վայրկյան լռություն:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Չգիտեմ որտեղ է դրել նա այն թուղթը: (Դադարում է փնտրել) Լավ, առայժմ արտագրեցեք այդ խնդիրը, ինքը կգա կհարցնեմ:

ԳՐԱԳԻՐ. (Երեսը դարձնում է դուրս գնալու, իսկույն հետ է դառնում: Պաուզա): Գրասենյակում մի քանի այցելուներ են սպասում:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Իսկույն կգամ:

ԳՐԱԳԻՐ. Նրանք ուզում են անձամբ պարոն Ալվերդյանին տեսնել:

ՎԱՐՍԱՄՅԱՆ, Ասացեք, որ Ալվերդյանն ոչ ոքի չի ընդունում:

(Գրագիրը գնում է: Վարսամյանը, գրասեղանի մոտ կանգնած, ձեռը հենում է հակատին և մտածում: Խորքի դռներից ներս է մանում Սառափյանը):

ՏԵՍԻԼ 2

ՎԱՐՍԱՄՅԱՆ և ՍԱՌԱՓՅԱՆ

ՍԱՌԱՓՅԱՆ. (Ճակատը թաշկինակով սրբելով): Ահա քեզ և գարնան սկիզբ, արդեն տաքն զգալի է: (Բարևելով): Հըմ, էլի միևնույն տրամադրության մեջ է մեր պարոնը:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Անփոփոխ:

ՍԱՌԱՓՅԱՆ. Զարմանալի է. հասկանալ չեմ կարող ինչ է պատահել այս տանը: Միհրանը խոմ այդպես է: Մարթային խոսեցնել չի լինում, իսկ Եվգինեն իր ննջարանից դուրս չի գալիս: Պետք է, վերջապես, պատճառն իմանալ: (Քայլերրն ուղղում է դեպի ձախի դռները):

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Կարծեմ հրամայված է ոչ ոքի չընդունել:

ՍԱՌԱՓՅԱՆ. Ահա թե ինչ: Տարօրինակ է, տարօրինակ, ոչինչ չեմ հասկանում: Ահա, ով որ գալիս է: (Ձախ դռներից ներս է մտնում Մարթան խիստ դեմքով):

ՏԵՍԻԼ 3

ՆՐԱՆՔ և ՄԱՐԹԱ

ՄԱՐԹԱ. (Գլխով սառն պատասխանելով Սառափյանի բարևին, դառնում է Վարսամյանին): Թիֆլիսի լրագրերը ստացվել են:

ՎԱՐՍԱՄՅԱՆ (Ցույց տալով գահավորակի առջև դրած սեղանը) Բոլորն այնտեղ է:

(Մարթան մոտենում է սեղանին, լրագրերը վերցնում և քայլերն ուղղում դեպի ձախի դռները):

ՍԱՌԱՓՅԱՆ. Եվգինեին կարելի՞ է տեսնել քույր Մարթա:

ՄԱՐԹԱ. (Սառն): Հարցրեք աղախնին: (Գնում է):

ՍԱՌԱՓՅԱՆ. (Վարսամյանին): Տեսա՞ր, էհ… ոչ, պետք է ինչպես և է ծանոթանալ այդ կոմեդիայի բովանդակությանը:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Լավ է , եթե կոմեդիա է և ոչ դրամա...

ՍԱՌԱՓՅԱՆ. Ինչ ասացի՞ր...

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Ոչինչ... (Ձախ դռներից գալիս է Հռիփսիմեն Եվգինեի մայրը՝ տխուր և հուզված):

ՏԵՍԻԼ 4

ՆՐԱՆՔ և տիկին ՀՌԻՓՍԻՄԵ

ՀՌԻՓՍԻՄԵ. Միհրանն այստե՞ղ չէ: (Տեսնելով Սառափյանին): Արշակ, լավ է, որ քեզ տեսա: Դու ինձ հարկավոր ես:

ՍԱՌԱՓՅԱՆ. Փառք աստծու, ես էլ մեկին հարկավոր եղա: Հրամայիր, հորաքույր...

ՀՌԻՓՍԻՄԵ. Գիտես ինչ... բայց (նայում է Վարսամյանին, որ այդ միջոցին գրասեղանի մոտ կանգնած ինչ-որ գրում է շտապով մի կտոր թղթի վրա)… Բարով, որդի…

ՎԱՐՍԱՄՅԱՆ. (Գլուխ տալով): Ես ձեզ չեմ խանգարիլ: Վերջացրի: (Գրիչը թողնում է սեղանի վրա, վերցնելով դրած թուղթը): Արշակ, եթե Միհրանը հարցնի իմ մասին, ասա՝ գրասենյակումն եմ: (Գլուխ տալով Հռիփսիմեին, գնում է խորքի դռներով):

ՀՌԻՓՍԻՄԵ. Ի՜նչ հասկացող տղա է: Ա՜խ, Արշակ, ես անբախտ եմ: Օգնի՜ր, այս քաղաքում, բացի քեզանից, մոտիկ ազգական չունիմ...

ՍԱՌԱՓՅԱՆ. Ի՜նչ է պատահել...

ՀՌԻՓՍԻՄԵ. Մի՜ հարցնիլ, որդի, ոչ մի բան մի հարցնիլ, միայն օգնիր…

ՍԱՌԱՓՅԱՆ. Բայց ի՞նչպես օգնեմ, ո՞ւմ օգնեմ, երբ ոչինչ չեմ հասկանում:

ՀՌԻՓՍԻՄԵ. Չի էլ հարկավոր, որ հասկանաս, որդի, դու միայն, ահ… ցը՜ … այո՜, ասա Միհրանին, ասա., որ... մի խոսքով հաշտեցրու նրան…

ՍԱՌԱՓՅԱՆ. Ո՞ւմ հետ հաշտեցնեմ:

ՀՌԻՓՍԻՄԵ. Ժենյայի:

ՍԱՌԱՓՅԱՆ. (Զարմացած): Միհրանը կռվել է Եվգինեի հե՞տ... Քարերը կտրաքեն... երկինքը կպատռվի:

ՀՌԻՓՍԻՄԵ. Չեն կռվել որդի, այլ, այլ... ինչպես ասեմ: (Առանձին): Ախ, ինչ դժվար է գաղտնիք պահել... (Նրան). Գիտե՞ս ինչ, որդի, ասա Միհրանին, որ սուտ է, որ Ժենյայի... խելքը գլխին չէ… փորձում է... մի խոսքով, հանգստացրու նրան... (Սկսում է լաց լինել):

ՍԱՌԱՓՅԱՆ. (Ձեռը ճակատին զարնելով): Ա՜խ, հիմա հասկացա... Մի խոսքով ասա, վերջացրու էլի…. Եվգինեին զրպարտել են:

ՀՌԻՓՍԻՄԵ. Զրպարտել են, իհարկե, զրպարտել են...

ՍԱՌԱՓՅԱՆ. Լուր են տարածել, որ նրա անցյալը նման է Արաբաջյանի անցյալին... Եվ տարածողն է տիկին Գալամքարյանը:

ՀՌՓՍԻՄԵ. Ի՞նչ, դու մի բան լսե՞լ ես:

ՍԱՌԱՓՅԱՆ. Այո՛, լսել եմ:

ՀՌԻՓՍԻՄԵ. Ուրեմն, խոսո՞ւմ են:

ՏՍԱՌԱՓՅԱՆ. Խոսում են:

ՀՌԻՓՍԻՄԵ. (Թուլանում ընկղմվում է գահավորակի վրա): Տունս քանդվեց...

ՍԱՌԱՓՅԱՆ. (Բռնելով նրա ձեռից): Լավ, ուշքի եկ, հորաքույր... Աշխարհում չի գտնվիլ մի ցինիկ, որ հավատա այդ զրպարտությանը:

ՀՌԻՓՍԻՄԵ, Բայց ի՞նչ անեմ, որդի, ի՞նչ անեմ, աղջիկս ձեռքիցս գնում է, բախտս ջուրն է ընկնում…

ՍԱՌԱՓՅԱՆ. Վեր կաց, հորաքույր, քայլերի ձայներ եմ լսում: Չպիտի աղմուկ բարձրացնել:

ՀՌԻՓՍԻՄԵ. (Վեր կենալով): Այո, այո, չպիտի աղմուկ բարձրացնել... երևի, Մարթան է գալիս... օհ, ես չեմ կարող նրա երեսը տեսնել, նա ուզում է հետս կռվել: Այս դռներով կգնամ... (Գնում է խորքի դռներով):

ՏԵՍԻԼ 5

ՄԻՀՐԱՆ և ՍԱՌԱՓՅԱՆ

ՄԻՀՐԱՆ. (Ներս է մտնում տնային պիջակով, գիշերային շապկով, օձիքը վերև բարձրացրած: Նա գալիս է ննջարանից և երևում է, որ գիշերն անքուն է անցկացրել: Մտքերի մեջ խորասուզված, չնկատելով Սառափյանին, մոտենում է գրասեղանին, նայում թղթերին, հետո մոտենում է գրքերի պահարանին, այնտեղ ևս ինչ-որ որոնում և ապա դարձյալ մոտենում է գրասեղանին: Այս ամբողջ ժամանակ Սառափյանը տարակուսած նայում է նրան մերթ ընդ մերթ գլուխը երերելով):

ՍԱՌԱՓՅԱՆ. (Պաուզա. մոտենում է): Ինչ երկա՛ր ես քնում:

ՄԻՀՐԱՆ. (Սթափվելով): Ա՜խ, այդ դո՞ւ ես... այդպես վա՞ղ…

ՍԱՌԱՓՅԱՆ. Լավ վաղ է... արդեն մեկ ժամն է:

ՄԻՀՐԱՆ. (Մեքենայաբար): Արդեն մեկ ժամն է: (Նստում է գրասեղանի քով, բաց անում արկղներից մեկը) Այս ի՞նչ է այստեղ: (Հանում է արկղից մի ռևոլվեր): Այս ինձ նվիրել է, ով, այո, այո, այն թուրք բեգը, որի եղբորը պաշտպանեցի: Ինչո՞ւ... անցան այն ժամանակները, երբ մարդիկ կյանքի բարդ խնդիրները լուծում էին զենքով, իսկ այժմ... (Արհամարհանքով ռևոլվերը դնում է սեղանի վրա և շարունակում արկղում որոնել): Վերցրո՛ւ, նվիրում եմ քեզ, հարկավոր կգա, դու նախկին զինվորական ես:

ՍԱՌԱՓՅԱՆ. (Վերցնում է ռևոլվերն ու նայում): Հիանալի ռևոլվեր է, ամերիկական վերջին սիստեմայի... (Դնելով գրպանը) Շնորհակալ եմ: (Պաուզա): Զբաղվա՞ծ ես…

ՄԻՀՐԱՆ. (Շարունակ որոնելով արկղի մեջ): Գո՞րծ ունիս հետս…

ՍԱՌԱՓՅԱՆ. Ուզում էի առաջարկել մի քիչ զբոսնելու ինձ հետ: Եղանակը վատ չէ, թեև մի քիչ տաք է:

ՄԻՀՐԱՆ. Ես ցերեկները ե՞րբ եմ զբոսնել... (Հանում է արկղից մի թուղթ, նայում է վերնագրին, վեր է կենում, մոտենում խորքի դռներին): Ո՞վ կա այստեղ: (Գալիս է գրագիրը): Այս թուղթ վաղը կարտագրեք և կներկայացնեք դատարանին:

ԳՐԱԳԻՐ. Հա, հենց մենք էլ այդ էինք փնտրում: (Վերցնում է թուղթը):

ՄԻՀՐԱՆ. Մեկ ժամն է, կողպեցեք գրասենյակն ու գնացեք: (Գրագիրը գնում է): Զարմանալի ողորմելի էակներ կան աշխարհում, այդ ապուշը, մինչև ամեն օր չարձակեմ պարապմունքից, ինքնագլուխ չի գնա: Կարծես, այդ ստրկական պաշտոնը հաճելի է նրա համար: (Սառափյանին դառնում պաուզայից հետո): Է՞լ ինչ կասես...

ՍԱՌԱՓՅԱՆ. Ոչի՛նչ…

ՄԻՀՐԱՆ. Այդ քիչ է... Բայց դեմքդ ցույց է տալիս, որ մի բան ուզում ես ասել, ի՞նչ էր խնդրում քեզանից հորաքույրդ:

ՍԱՌԱՓՅԱՆ. (Զարմանալով ու շփոթվելով): Հորաքույրս...

ՄԻՀՐԱՆ. Այո, իմ զոքանչը… Չէ՞ որ մի փոքր առաջ նա այստեղ լալիս էր քո առջև: (Նայելով նրան խորհրդավոր): Երբեմն մարդ կարող է պատի հետևից էլ զգալ, թե ինչ են խոսում իր մասին: (Մտածում է): Բայց ինձ համար միևնույն է, ինչ ուզում են — թող խոսեն: Հասկանում եք, միևնույն է,.. (Ձեռով մի շարժումն անելով, դարձյալ նստում է գրասեղանի քով: Խորքի դռներից ներս են մտնում Սուլթանյյանը և Վարսամյանը):

ՏԵՍԻԼ 6

ՄԻՀՐԱՆ, ՍՈՒԼԹԱՆՅԱՆ, ՍԱՌԱՓՅԱՆ և ՎԱՐՍԱՄՅԱՆ

ՄԻՀՐԱՆ. (Տեսնելով նրանց, աշխատում է ձևանալ անհոգ ու զվարթ); Ա՛ա, կովկասյան ամերիկացի, բարով: Ի՞նչ է ասում քո գործնական փիլիսոփայությունը...

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Իմ գործնական փիլիսոփայությունը պատվիրում է ինձ՝ ներկայացնել քեզ ամերիկական հաշիվ և պահանջել քեզանից կորցրած ժամանակիս համար վարձ: Այդ ի՞նչ է պատահել, բարեկամ, գեներալի չին ես ստացել, թե՞ մինիստրի պաշտոն, ահա երրորդ անգամն է գալիս եմ, ասում են, «չի ընդունում»... (Նստում է գրասեղանի քով: Պաուզա): Ծանոթացա՞ր իմ մեքենապետի գործի հետ: Բա՞ա այդ ինչ է, դու նիհարել ես, կարծես, ծերացել... Ի՞նչ է պատահել....

ՄԻՀՐԱՆ. Ծանոթացա քո մեքենապետի գործի հետ:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Հըմ, հույս կա՞, որ նրան արդարացնեն:

ՄԻՀՐԱՆ. (Առանց նրան նայելու, դեպի անորոշ տարածություն): Խե՜ղճ մարդ: (Վարսամյանին ե Սառափյանին): Երևակայեցեք մի համեստ և աշխատասեր մարդ: Նա ունի մի երիտասարդ կին — գեղեցիկ և ոչ հիմար, բարոյական, բայց վերին աստիճանի կենսասեր: (Հառաչանքը զսպելով): Ամուսիններն ապրում են հանգիստ և երջանիկ: (Հուզվում է: Պաուզա): Ասպարեզ է գալիս մի ինչ-որ ֆրանտ, երկար ժամանակ հետամուտ է լինում գեղեցիկ կնոջը: Երկու տարի կինը մաքառում է նրա հրապույրներիդ դեմ, վերջը (հուզումը զսպելով)... մոլորվում է... և կորցնում է խելքը…

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Արի ու հասկացիր կնոջ հոգեբանությունը:

ՄԻՀՐԱՆ. Մարդն իմանում է իր անպատվությունը և կնոջը նախազգուշացնում: Կինն առաջ հերքում է, հետո հանձն առնում հանցանքը և խոստանում է ձեռք վերցնել մոլորությունից... Բայց չի կարողանում: Երեք տարի մարդը տանջվում է, կարող եք երևակայել ինչպես: (Սուլթանյանին): Գործին կպած է նրա հիշատակարանը՝ դա տառապող հոգու մի ամբողջ տրագեդիա է: (Զսպելով հուզմունքը, նորից դառնում է Սառափյանին և Վարսամյանին): Մի օր նա, որսից վերադառնալով, հանդիպում է կնոջը սիրականի գրկում...

ՍԱՌԱՓՅԱՆ. Եվ իսկույն, իհարկե, ֆրանտին սպանում…

ՄԻՀՐԱՆ. (Հառաչելով): Օ՜, երջանկությունը մարդու համար այնքան հազվագյուտ բան է, որ երբ ձեռքն է ընկնում, ատամներով է պահում նրան: Այդ ամուսինը դեռ հույս է ունենում իր ընտանեկան հանգստությունը վերականգնելու: Նա զսպում է իրան: Այնինչ ֆրանտը կարծելով, որ հասել է իր վերջին ժամը, գրպանից հանում է մի դանակ պաշտպանվելու համար: Ամուսինն ասում է նրան, «հեռացիր, ես չեմ ուզում մարդասպան դառնալ»: Սակայն ֆրանտը թույլ է տալիս իրան մի արհամարհական ծիծաղ: Եվ ահա այդ ծիծաղը, իբրև լկտի անարգանք, կտրում է անպատվածի համբերությունը. թշվառն արձակում է հրացանը, և ֆրանտը թավալվում է իր սիրուհու ոտների տակ:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. (Պաուզա): Եվ այժմ կինը ողբում է իր սիրեկանին, իհարկե:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Ընդհակառակը, նա լալիս է իր ամուսնու մասին: Եվ հենց նա ինքն է ինձ խնդրել մի լավ փաստաբան վարձել իր մարդու համար:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Ահա այստեղ կարող էիր ասել, «արի ու հասկացիր կնոջ հոգեբանությունը»: (Միհրանին); Բայց ես զարմանում եմ, ահա երեք տարի է քո օգնականն եմ և չեմ հիշում, որ մի գործ քեզ այնքան հուզած լինի, որքան այդ մեքենապետի գործը...

ՄԻՀՐԱՆ. (Անցուդարձ անելով): Ինձ հուզում են այդ մարդու քաշած տանջանքները: Որքան համբերություն, որքան հոգեկան ուժ պետք է ունենա մի մարդ, որ կարողանա զսպել իր մեջ գազանին երեք տարի շարունակ... Իսկ նա մի հասարակ մեքենապետ է, գրեթե անկիրթ...

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Իմ կարծիքով, աշխարհում երկու տեսակ մարդիկ գիտեն հերոսաբար կրել իրանց վիշտը — փիլիսոփաները և աշխատանքի մարդիկ: Եվ դրանք են կազմում մարդկության բարոյական արիստոկրատիան: Մյուսները միջին էակներ են և խաղալիք իրանց ճակատագրի հաճույքին…

ՄԻՀՐԱՆ. (Նայելով Սուլթանյանին խոր և տարօրինակ հայացքով) Այո:

ՍՈՒԼԹԱՆՅԱՆ. Այո: Ով երկնքում չի սավառնում մտքերով կամ ամբողջ էությամբ կպած չէ երկրին, ծառի ճյուղի պես երերվում է ամեն մի թեթև հողմից… Ինչևէ, ես շատ ուրախ եմ, որ իմ մեքենապետի գործն այդքան քեզ հուզել է, այդ կնշանակե, որ դու նրան կպաշտպանես զգացումով: Շատ ուրախ եմ: Դեհ, ցտեսություն, ես գնամ թշվառի ընտանիքին

ուրախացնեմ, որ հույս կա նրան արդարացնելու: (Դառնալով Սառափյանին): Իսկ հետո ուզում եմ քեզ հետ «Եվրոպա» հյուրանոցում մի լավ ճաշել: Գնանք:

ՍԱՌԱՓՅԱՆ. Ահա այդ բարձր է ամեն մի փիլիսոփայությունից (Միհրանին): Ցտեսություն: (Վարսամյանին) Մտածիր որքան կամենում ես խորը, բայց մի սպասիր կյանքից կատարյալ երջանկություն, այլ վերցրու այն, ինչ որ տալիս է. թեկուզ մի ուրախ ճաշ շամպանիայով: (Սուլթանյանին) Ես քո խոնարհ ծառան: Ցտեսություն. (Սառափյանը և Սուլթանյանը գնում են խորքի դռներով):

ՏԵՍԻԼ 7

ՄԻՀՐԱՆ ԵՒ ՎԱՐՍԱՄՅԱՆ

ՄԻՀՐԱՆ. (Մտքերի մեջ խորասուզված մի քանի վայրկյան լուռ, անցուդարձ է անում: Պաուզա): Ի՞նչ ես կարծում նա իրավացի՞ է:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Ո՞վ:

ՄԻՀՐԱՆ. Սուլթանյանը, նա ասում է, ով երկնքում չի սավառնում կամ երկրին կպած չի իր ամբողջ էությամբ, երերում է ամենաթեթև հողմից:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. (Որ շարունակ նայում է յուրաքանչյուր շարժմանը): Նա մի բանում իրավացի է, այն է՝ աշխատանքի մարդիկ ավելի հեշտությամբ են կրում իրենց վիշտը: Այո, ես կարծում եմ, չկա վիշտ, որին կարելի չլիներ խեղդել աշխատանք ասված առյուծի ճիրաններով: Այս տեսակետից զարմանալի է ինձ համար քո վերջին ժամանակվա ծուլությունը...

ՄԻՀՐԱՆ. (Հանկարծ կանգ առնելով, նայում է նրան խորը-խորը): Ինչո՞ւ ես այդ ասում:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. (Շփոթվելով) Դու փախչում ես աշխատանքից:

ՄԻՀՐԱՆ. Բայց ես վիշտ չունեմ:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. (Կամենալով ուղղել իր անզգուշությունը) Ես այդ չէի ուզում ասել: Ահա մոտ երկու շաբաթ է, դու գործով չես հետաքրքրվում, ոչ ոքի չես ուզում ընդունել: Եթե այսպես շարունակես, շուտով մենք կզրկվենք կլիենտներից:

ՄԻՀՐԱՆ. Եվ այդ քեզ շա՞տ կտխրեցնի:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Այո, որովհետև դու կարող ես կորցնել տարիների ընթացքում ձեռք բերած հռչակդ...

ՄԻՀՐԱՆ. (Դառն ծիծաղելով): Հռչա՜կ, հա, հա, հա, հռչակ: Մի՞թե որևէ հռչակ կամ լավ անուն կարող է մարդուն բախտավորեցնել: Մարդու այստեղը (խփելով կրծքին) պիտի հանգիստ լինի... այստեղը...

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Ես կարծում եմ, երբ մարդ կատարում է իր պարտականությունները, նրա սիրտը միշտ հանգիստ պիտի լինի…

ՄԻՀՐԱՆ. Մի՞թե, միամիտ և մաքուր երիտասարդի խոսքեր: Բայց, ասա՛ ինձ, շատ մարդիկ են ընդունակ կատարելու իրենց պարտականությունները, ասա՛ շատ մարդիկ: (Կանգելով նրա դեմ ու դեմ ու նայելով ուղիղ աչքերին): Համազասպ, ես գիտեմ ինչ ես ուզում ասել, ինչ ես մտածում այս րոպեին, այո՛, այ՛ո , գիտեմ ինչ պարտականության մասին է խոսքդ: Դու ինձ մեղադրում ես մտքումդ, այնպես չէ, համարում ես ինձ թուլամորթ, այո , ասա՛: Ինչո՞ւ ես երեսդ դարձնում, միթե ես հիմար եմ, միթե չգիտեմ՝ բարեկամիս աչքերի մեջ կարդալ նրա

մտքերը: Այո, այո, դու ամեն բան գիտես, միայն համեստությունը, այդ կեղծ զգացումը թույլ չի տալիս քեզ ինձ բացարձակ հանդիմանելու:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Միհրան:

ՄԻՀՐԱՆ. Զուր մի կեղծիր, Համազասպ: Մեր բարոյական հայացքները միևնույնն են, և այսքանը բավական է: Սակայն գաղափարների և իրականության մեջ կա ահագին խորխորատ: Գիտեմ, դու ուզում ես, որ ես հերոսաբար անցնեմ այդ խորխորատը: Կանցնեմ, կանցնեմ, տալիս եմ քեզ ազնիվ խոսք:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. (Ուրախանալով): Այո՜, հուսամ.,. Բայց և, այդպես էլ համոզված էի, ուրիշ կերպ չէր կարող լիներ:

ՄԻՀՐԱՆ. Այն երեկո — հիշո՞ւմ ես — երբ դու խոսում էիր Արաբաջյանի մասին, քո յուրաքանչյուր բառն իմ մեջ ավելի ու ավելի ամրացնում էր իմ գաղափարը: Քո մեջ ես տեսնում էի մի հզոր պաշտպանի:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Ապացուցիր, ուրեմն, որ մեր բարոյական աշխարհն ամայի չէ. որ մենք ևս ունենք մարդիկ բառի ընդարձակ նշանակությամբ, գործի և ոչ խոսքի մարդիկ…

ՄԻՀՐԱՆ. Կաշխատեմ:

ՎԱՐՍԱՄՅԱՆ. Դե, թույլ տուր, ուրեմն, սեղմել ձեռքդ իբրև հավատարիմ զինակից: Ես խոստանում եմ հետևել քո օրինակին, եթե իմ կյանքի հանգամանքներն էլ այդպես հյուսվեն: (Սեղմում է ձեռքը): Ցտեսություն, ես հեռանում եմ, որպեսզի այդ տրամադրության մեջ տեսնվես նրա հետ... Ցտեսություն: (Խորքի դռների մոտ դարձյալ սեղմում է նրա ձեռքն և գնում):

ՏԵՍԻԼ 8

ՄԻՀՐԱՆ մենակ, հետո ՄԱՐԹԱ

ՄԻՀՐԱՆ. Ազնիվ տղա, համարում են տոլստոյական (Նստում է գրասեղանի մոտ. վերցնում է մի գործ և սկսում է կարդալ: Ձախի դռներից ներս է մտնում Մարթան, և տեսնելով եղբորն, զբաղված, կամացուկ մոտենում է գահավորակի առջև դրած սեղանին և կանգ առնելով նայում նրան վշտակցությամբ: Միհրանը, ըստ երևույթին, կարդում է, բայց միտքը զբաղված է իր վշտով: Մերթ ընդ մերթ նա ցնցվում է: Վերջապես, գործը շպրտում է դեն, վեր է կենում և անցուդարձ անում: Հանկարծ նկատելով քրոջը կանգ է առնում): Դարձյա՛լ:

ՄԱՐԹԱ. Այո, և միշտ, քանի որ տանջվում ես:

ՄԻՀՐԱՆ. Ես այլևս չեմ տանջվում:

ՄԱՐԹԱ. Ո՞վ հավատաց: Նայիր հայելուն, տես ի՞նչ էիր և ի՞նչ ես դարձել: Այս երկու շաբաթվա ընթացքում դու տասը տարով ծերացել ես: Դու գիշերները քուն չունիս, ցերեկները հանգիստ:

ՄԻՀՐԱՆ. Լավ կանես, եթե իմ մասին հոգալու փոխարեն, մտածես քո վարմունքի մասին: Դու նրան հալածում ես:

ՄԱՐԹԱ. Ես նրան միայն ատում եմ, ուրիշ կերպ չեմ կարող վարվել մի կնոջ հետ, որ անբախտացրել է իմ միակ եղբորը:

ՄԻՀՐԱՆ. Ասում ես և չես զգում, որ նա ինքն անսահման տանջվում է:

ՄԱՐԹԱ. Երևի խղճի խայթոցից, չէ՞: Եթե նա խիղճ ունենար, քեզ հետ չէր ամուսնանալ…

ՄԻՀՐԱՆ. Մարթա՛…

ՄԱՐԹԱ. Այո, եթե նա խիղճ ունենար քեզ չէր խաբի:

ՄԻՀՐԱՆ. Նա ոչ միայն ինձ չի խաբել, այլև իմ վերաբերմամբ վարվել է ազնվաբար:

ՄԱՐԹԱ. (Դառն հեգնությամբ) Մի՞թե... Ես այն ժամանակ նրան ազնիվ կհամարեի, եթե նա իր խոստովանությունն աներ ամուսնանալուց առաջ:

ՄԻՀՐԱՆ. Այն ժամանակ խոստովանելն այնքան մեծ քաջություն չէր լինիլ, որքան այժմ: Երբ կինը հանուն անկեղծության հրաժարվում է ճաշակված երջանկությունից — հասկանո՞ւմ ես, ճաշակված — նա արժանի է հիացման: Քանի որ նա հարսնացու էր, ինձ չէր սիրում, կարող էր վշտացնել ինձ սառնարյուն: Այն ժամանակ նա չգիտեր ի՞նչ ասել է փոխադարձ սիրո քաղցրություն, իսկ այժմ գիտե: Ահա ինչն եմ ես հերոսություն համարում: Արդյո՞ք, շատերն են ընդունակ այդ տեսակ քայլի, այն էլ մեր կանանցից: Քեզ լավ հայտնի է, որ ես նրան հավատում էի ինչպես սրբուհու: Եվ եթե ամբողջ քաղաքը նրան չարախոսեր — դարձյալ իմ հավատը դեպի նա չէր խախտվիր: Ուրեմն, ինչ դժվարություն կար նրա համար իր անցյալն ինձանից թաքցնելու, եթե չունենար նուրբ խիղճ, ազնիվ հոգի… եթե չսիրեր ինձ…

ՄԱՐԹԱ. Գեղեցիկ խոսքեր, որոնք պատիվ են բերում միայն քեզ, բայց նրան չեն արդարացնում:

ՄԻՀՐԱՆ. Ոչինչ չի կարող նրան այնպես արդարացնել, որպես հենց իր խոստովանությունը և ոչ ոք չի կարող նրան այնքան խիստ դատապարտել, որքան նա՝ ինքը….

ՄԱՐԹԱ. (Պաուզա: Մոտենում է եղբորը): Լսիր, Միհրան. մանուկ հասակից մենք եղել ենք ընկերներ, քո վշտերն և ուրախություններն իմն են եղել, քո անունն ու պատիվը իմն եմ համարել: Մեր ծնողների մահից հետո ես քեզ համար եղել եմ մայր և հայր... Ուսուցչություն անելով, քեզ օգնել եմ, որ բարձրագույն ուսում ստանաս: Ուրեմն ինչպե՞ կարող եմ սառնորեն վերաբերվել քո ճակատագրին: Ասում ես. «ներում եմ»: Գուցե, բայց մի՛ մոռանար, որ կա հասարակական կարծիք, բարեկամների թաքուն արհամարհանք, թշնամիների չար ուրախություն: Այս բոլորը դու գուցե սկզբում կարողանաս արհամարհել, բայց հետո, հետո կսկսես ականջ դնել շշուկներին: Եվ այն ժամանակ կատես նրան ավելի, քան կարող էիր ատել այժմ, եթե այդպես չմտածեիր: Ուրեմն, մի՞թե ավելի լավ չէ խնդիրը լուծել հենց այժմ: (Պաուզա): Արձակիր նրան:

ՄԻՀՐԱՆ. Այդ է քո բոլոր ասելիքը: Հասարակական կարծիք, բարեկամների արհամարհանք, չգիտեմ էլ ինչ: Մարթա, այդ բոլորից ավելի բարձր ու թանկ է ինձ համար իմ ներքին դատավորի ձայնը: Ես գիտեմ, որ բարոյականի կողմից մեր կյանքի ինը տասներորդականը պատկանում է հասարակությանը, գիտեմ որ կան ավանդություններ, որոնց չի կարելի ոտնատակ անել անպատիժ: Բայց ես ուզում եմ հպատակվել իմ խղճի ձայնին... Իսկ նա, այդ ձայնն ինձ ասում է. «Եվգինեն արժանի է ներման»: Ոչ, այդ ձայնն ավելի է ասում: նա ասում է. «Եվգինեն բարձր բարոյականության տեր կին է»: (Մարթան ապշած նայում է նրան): Զարմացի՛ր, բայց այս մի այնպիսի համոզմունք է, որին չի կարող խեղդել իմ մեջ ոչ մի հասարակական նախապաշարմունք: (Պաուզա): Միթե ես չգիտեմ, որ ընկերական նիստ ու կացի պայմաններն անհատները չեն ստեղծում: Սակայն անհատները կարող են արհամարհել նրանց և մինչև անգամ փոփոխել... Ինչ ասել կուզի, ես չէի կամենա, որ նրա անցյալն այդպես լիներ, բայց մտածիր, ո՞վ եմ ես ինքս, ի՞նչ է վերջապես, իմ սեփական անցյալը: Այո, ի՞նչ է: Եթե նա հազիվ պատանեկան հասակում ընկել է մի խաբեբայի թակարդը, ինձ ոչ ոք չի խաբել, ես ինքս եմ խաբել... Այո՛, այո՛, թեև իմ խաբեբայությունն այնքան ստոր չի եղել, որչա՛փ այդ պարոնինը, բայց խաբեբայություն է եղել... Ես ևս մոլորեցրել եմ կանաց... Ինչո՞ւ Եվգինեն ինձ ներել է իմ անցյալի կեղտերը, իսկ ես չպիտի կարողանամ նրա անցյալի ակամա սխալը մոռանալ: Եվ ոչ միայն սխալը, այլ թեկուզ կեղտերը, եթե լինեի՞ն կեղտեր...

ՄԱՐԹԱ. Վարսամյանի խոսքերը...

ՄԻՀՐԱՆ. Ա՜, այդ խոսքերը ոչ Վարսամյանինն են և ոչ իմը: Դրանք խոսքեր չեն, այլ արդար բողոք օրենքի ուժ ստացած անիրավության դեմ... Եվ ես զարմանում եմ, որ դու կանանց իրավունքների պաշտպանդ, ընդդեմ ես մի այդպիսի բողոքի:

ՄԱՐԹԱ. Բայց ես չեմ ուզում, որ բողոքողը իմ եղբայրը լինի: Չեմ ուզում, որ նա լինի դարավոր բերդի դեմ առաջին գնդակ արձակողը:

ՄԻՀՐԱՆ. Եվ ուզում ես, որ նա լինի բարոյական պարազիտ, հոգեկան քաշությունից զուրկ: Ուզում ես, որ նա լինի մեկն այն ողորմելիներից, որոնք ստրկաբար հեծեծում են հասարակական կարծիք ասված բռնության ներքո... Ոչ, ոչ, ես չեմ կամենում և չեմ կարող լինել այդպիսի մարդ...

ՄԱՐԹԱ. (Լռությունից հետո): Այո, տեսնում եմ, որ իմ և քո հայացքների մեջ կա ահագին անդունդ: Այդ անդունդը մենք չենք կարող լցնել վիճաբանությամբ: (Կռվելով ինքն իր հետ պաուզա): Ուրեմն... թող նա բաժանի մեզ...

ՄԻՀՐԱՆ. Մա՛րթա…

ՄԱՐԹԱ. Ինչո՞ւ կեղծել, այդպիսի մի կնոջ հետ ես մի հարկի տակ մնալ չեմ կարող: (Սկսում է արտասվել):

ՄԻՀՐԱՆ. (Գրգռվելով) Մի՛ վիրավորիր նրան, (Ձախ դռների մեջ երևում է Եվգինեն: Նա գունատ է, նիհար, վերջին ժամանակի կրած հոգեկան հուզումներն ու տանջանքները նրա դեմքին տվել են հեգություն: Նրա աչքերի արտահայտությունը վշտալի է, սակայն հանգիստ: Աչքերի տակ երևում են թեթե կնճիռներ, բայց վիշտը դեմքի գեղեցկությունը նրբացրել է: Մարթան, տեսնելով նրան, շտապով սրբում է իր աչքերն և ատելությամբ լի հայացքը հառում նրա երեսին: Մինչդեռ Եվգինեն նայում է նրան հանգիստ հայացքով, որի մեջ երևում է նրա հոգու հպարտությունը: Մարթան արագությամբ երեսը դարձնում է նրանից: Եվգինեի դեմքով սահում է մի մեղմ կիսահեգնական և ներողամիտ ժպիտ: (Մարթան քայլերն ուղղում է դեպի խորքի դռները):

ԵՎԳԻՆԵ. (Հանգիստ մի քանի քայլ առաջ է շարժվում): Սպասեցե՛ք:

ՄԱՐԹԱ. (Նայելով նրան անզուսպ ատելությամբ): Ի՞նչ եք կամենում…

ԵՎԳԻՆԵ. Ես ձեզ խնդրում եմ մնալ...

ՄԱՐԹԱ. (Դառն հեգնությամբ և կծու): Մնալ այս օդում.. Այստեղ... ես կխեղդվեմ...

ՄԻՀՐԱՆ. (Դառն հանդիմանությամբ) Մարթա, Մարթա:

ՄԱՐԹԱ. Ես կվերադառնամ միայն քո վերջին վճիռն իմանալու համար: (Գնում է):

ՏԵՍԻԼ 9

ԵՎԳԻՆԵ և ՄԻՀՐԱՆ

Միհրանը մոտենում է լուսամուտին, մի քանի վայրկյան նայում դեպի փողոց մտախոհ, հետո մոտենում է գրասեղանին, նայում ցրված հայացքով թղթերին, ապա նստում է, արմունկները դնում սեղանի եզրին և գլուխը հենում ձեռների ափերին. Եվգինեն մոտենում է գահավորակին և մի ձեռը հենելով սեղանին, նայում է նրան:

ՄԻՀՐԱՆ. (Բավական երկարատև լռությունից հետո, ձեռները հեռացնում է երեսից, բայց դարձյալ Եվգինեին չի նայում): Ի՞նչ էիր կամենում ասել Մարթային:

ԵՎԳԻՆԵ. Ես ուզում էի խնդրել, որ նա իր եղբորը մենակ չթողնի…

ՄԻՀՐԱՆ. Ի՞նչ է նշանակում այդ:

ԵՎԳԻՆԵ. Այն, որ ինձ համար անհամեմատ ավելի հեշտ է լսել նրա նախատինքները, քան տեսնել քո լուռ տանջանքները...

ՄԻՀՐԱՆ. Ի՞նչ է մնում ինձ անել, եթե ոչ լռել... Իսկ հետո (զգացված ձայնով) մոռանալ...

ԵՎԳԻՆԵ. Մոռանա՞լ... Ո՞վ կարող է մարդուց անհնարինը պահանջել: Ես այդ մասին չեմ էլ երազում անգամ:

ՄԻՀՐԱՆ. Երբեմն մտածում եմ, արդյո՞ք, ավելի լավ չէր լինի, եթե ոչինչ չիմանայի: Հարյուր բախտավորներից իննսունինը ապրում է իլյուզիայով, թող մեկն էլ ես լինեի...

ԵՎԳԻՆԵ. Եվ ես շարունակեի խաբե՞լ: Տեսնել քեզ երջանիկ և ամեն վայրկյան զգալ, որ դու խավարի մե՞ջ ես, որ քո երջանկությունը հիմնված է մի սիրող կնոջ կեղծիքի վրա: Ո՛չ:

ՄԻՀՐԱՆ. Ճիշտ է, ճիշտ է, ես այդ մասին շատ եմ մտածել: Բայց և այնպես երևակայությունս ամեն վայրկյան պատկերացնում է այդ քստմնելի տեսարանը բոլոր իր մանրամասներով: Գիշեր-ցերեկ իմ աչքերի առջև կան գնած է քեզ մոլորեցնողի կերպարանքը և հալածում է ինձ իր հանդուգն ու լիրբ արհամարհանքով:

ԵՎԳԻՆԵ. Հեշտ չի դիմանալ վիրավորված պատվի զգացմանը...

ՄԻՀՐԱՆ. Պատվի…Ոչ, դու սխալվում ես: Ինչպես դու ինձ հետ եղար անկեղծ, կլինեմ և՛ ես: Իմ պատիվն ես արատավորված չեմ համարում: Սխալը քո անցյալումն է և ոչ ներկայում: Ինձ տանջում է միայն այն միտքը, որ դու երբևէ, թեկուզ մի ժամով, պատկանել ես այդ մարդուն: Դա, իհարկե, նախապաշարմունքն է, այո՛, նախապաշարմունք բայց և.. տանջանք… (Վեր է կենում և չափազանց հուզված անցուդարձ անում, մի քանի վայրկյան լռություն): Անցյալ օրն երեկոյան, մենակ նստած այս սեղանի մոտ, թեյ էի խմում, հանկարծ բաժակի մեջ, թեյի երեսին կենդանի նկարվեց նա: Ես խելագարի պես գոռալով ոտքի թռա: Թվաց ինձ, որ նա ծիծաղում է քեզ վրա դիվային ծիծաղով: Ամեն տեղ, ամեն տեղ նրան եմ տեսնում: Նրա ուրվականն ինձ հալածում է գիշեր-ցերեկ: (Պաուզա): Բայց... բայց... ես կազատվեմ, կազատվեմ այս հիմար հալուցինացիայից և կմոռանամ բոլորը: (Ընկղմվում է գահավորակի վրա և ճակատը ձեռներով սեղմում: Պաուզա):

ԵՎԳԻՆԵ. (Դառն տանջանքով) Դու երբեք չես մոռանալ:

ՄԻՀՐԱՆ. (Գլուխն արագորեն բարձրացնելով և ոտքի կանգնելով): Ինչո՞ւ: Միթե ես այնքան անզոր եմ հոգով, թուլամորթ… Եթե ես կարողացա զսպել իմ մեջ նախահայրերիցս ժառանգած ասիականության կոպիտ ոգին, ինչո՞ւ չեմ կարող ավելին անել:

ԵՎԳԻՆԵ. Ինձ համար ավելի լավ կլիներ, եթե չզսպեիր այդ ոգին: Այն րոպեին, երբ մթնած աչքերով հարձակվելով ինձ վրա, քիչ էր մնում սպանեիր ինձ, ես երկյուղ չունեի: Մի հարված, և ես կստանայի իմ արժանի վարձը, ու ամեն ինչ կվերջանար, Իսկ ա՞յժմ.. Ոչ, Միհրան, մի՛ խաբիր քեզ: Ներել — գուցե կարողանաս, բայց մոռանալ — երբեք:

ՄԻՀՐԱՆ. Ուրեմն...

ԵՎԳԻՆԵ. Պետք է անել այն, ինչ որ պահանջում է քո քույրը: Ինչո՞ւ կեղծել. ինձ համար ավելի լավ է զրկվել ամեն բանից, քան դառնալ խղճալի: Նա, որ մի ժամանակ ապրել է սիրո շքեղ պալատում, չի կարող կանգնել նույն պալատի դռների մոտ և ողորմություն խնդրել:

ՄԻՀՐԱՆ. Գիտեի, որ հպարտ ես, բայց չգիտեի, որ այդչափ եսամոլ ես:

ԵՎԳԻՆԵ. Եսամո՞լ:

ՄԻՀՐԱՆ. Այո, եսամոլ: Դու այս տնից ուզում ես հեռանալ այն պատճառով, որ չես կարող տեսնել իմ տանջանքները: Դա եսամոլության նուրբ տեսակներից մեկն է:

ԵՎԳԻՆԵ. Թող այդպես լինի: Բայց, հեռանալով այստեղից, կթեթևացնեմ քո տանջանքները: Վիրավորված մարդու ցավը կրկնապատկվում է, երբ նա տեսնում է այն զենքը, որով վիրավորվել է: Միայն իմ բացակայությունը կարող է բուժել քո վերքը…

ՄԻՀՐԱՆ. Այդ է, ուրեմն, քո կարծիքով, խնդրի լուծումը:

ԵՎԳԻՆԵ. Ես կարծում եմ, որ ուրիշ ելք չկա: Պետք է բաժանվենք:

ՄԻՀՐԱՆ. Երբե՛ք, երբե՛ք. դու պիտի մնաս իմ տանը հենց ինձ՝ բժշկելու համար: Քո պատիժը դու արդեն ստացել ես, բավական է. մի՞թե ես չգիտեմ ինչ է կատարվում այս րոպեին քո հոգում: Դու պետք է մնաս իմ տանը:

ԵՎԳԻՆԵ. Չեմ կարող... վերջապես իրավունք չունիմ…

ՄԻՀՐԱՆ. Եվ ո՞վ է խլում քեզանից իրավունքը:

ԵՎԳԻՆԵ. Իմ խիղճը — Հավատ՛ա, այդ միակ ելքն է, չկա ուրիշը, չկա: Եթե ես մինչև այսօր հետաձգել եմ, պատճառը մայրս էր: Ես սպասում էի, որ հարվածի ուժը մի փոքրիկ թուլանա նրա մեջ: Այսօր ես հաջողեցի համոզել նրան, որ ինձ համար ուրիշ ելք չկա: (Լռություն): Իրեղեններս արդեն կապկապած են, մնում է միայն... (ճնշված ձայնով) վերջին անգամ նայել քեզ: (Երեսը դարձնում է նրանից, որպեսզի արտասուքը թաքցնի):

ՄԻՀՐԱՆ. (Նայում է նրան համակրությամբ և սիրով լի հայացքով: Նրա դեմքն արտահայտում է ջերմ ցանկություն գրկել ու համբուրել Եվգինեին, բայց ինքնասիրությունը չի թույլ տալիս նրան այդ անելու: Պաուզա): Բավակա՜ն է, բավակա՜ն է:

ԵՎԳԻՆԵ. (Կարճատև, բայց զորեղ պատերազմից հետո, վճռողաբար): Մնաս բարով... միայն.., (Տատանվում է), բայց ոչինչ... (Բացասական շարժումն է անում ձեռով և քայլերն ուղղում դեպի ձախ կողմի դռները: Ներսի սենյակից լսվում է դայակի ձայնը,որ օրոր է երգում երեխայի համար: Խորքի դռներում երևում է Մարթան: Լսելով դայակի երգը, Եվգինեն զորեղ ցնցվում է, դողում և հազիվ ոտքի վրա մնալ կարողանալով, հենվում է դռների շրջանակին);

ՄԻՀՐԱՆ. (Նայում է շարունակ Եվգինեին:

ԵՎԳԻՆԵ. (Լռությունից հետո) Ես շատ եմ մտածել նրա մասին... (Խուլ ձայնով, արտասանելով յուրաքանչյուր բառն առանձին) Նա քեզ է պատկանում... Ես նրան թողնում եմ, այստեղ:

ՄԱՐԹԱ. Եվ ուրիշ կերպ էլ չի կարող լինել...

ՄԻՀՐԱՆ. (Ցնցվում է քրոջ ձայնից): Ոչ, կարող է լինել... (Մոտենում է Եվգինեին):

ԵՎԳԻՆԵ. (Ուժասպառ ընկնում է Միհրանի գիրկը): Ա՜հ…

ՄԻՀՐԱՆ. (Պաուզա): Մարթա, մոտեցի՛ր... օգնի՛ր.. Եվգինե՛… (Մարթան տեղից չի շարժվում և նայում է նրանց արհամարհանքով, իսկ երբ Միհրանը գրկում է Եվգինեին, ցնցվում է: Միհրանը հանդարտիկ Եվգինեին նստեցնում է աթոռի վրա, աշխատելով նրան ուշքի բերել: Ներսի սենյակից տակավին լսվում է դայակի երգը, որ հետզհետե ցածրանալով ընդհատվում է):

ԵՎԳԻՆԵ.(Աչքերը բանալով, նայում է Միհրանին, հետո հանդարտիկ չոքում է նրա առջև և, վերցնելով նրա ձեռքը, ամուր սեղմում է շրթունքներին): Չեմ կարող, չեմ կարող...

ՄԻՀՐԱՆ. (Ձեռը խլելով, գրկում է նրա գլուխը: Պաուզա): Համոզմունքով ներեցի, սիրելով կմոռանամ... (Երեսը դարձնելով Մարթային, ձեռով նշան է անում նրան հեռանալու):

ՄԱՐԹԱ. Մոռացիր և ինձ: (Գնում է):

Վարագույր

1901 թ.